Azg
armenian daily
9 ՄԱՐՏ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 43 (2011)

Լրատվական ոլորտի կազմակերպությունները մտահոգություն են հայտնում «Միասնություն» դաշինքի մարտի 3-ի հայտարարության առիթով

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: «Հայաստանի ժուռնալիստների միությունը, Երեւանի մամուլի ակումբը, Մամուլի ազգային ակումբը եւ Հայաստանի ԶԼՄ ընկերակցությունը մտահոգություն են հայտնում «Միասնություն» դաշինքի մարտի 3-ի հայտարարության առթիվ՝ այն գնահատելով իբրեւ խոսքի ազատության դեմ ոտնձգության փորձ», ասված է հիշյալ կազմակերպությունների մարտի 8-ին տարածած հայտարարությունում:

«Մենք ուշադրությամբ հետեւում ենք դեպքերի ընթացքին ու լրատվամիջոցների բոլոր հնարավորություններն օգտագործելու ենք անցանկալի զարգացումները կանխելու համար», ընդգծում են հայտարարության հեղինակները:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27

Հարություն Հարությունյանը բացարկ է հայտնել ՀՀ զինդատախազությանը

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Մարտի 8-ին հոկտեմբերի 27-ի գործով մեղադրյալ, Հայաստանի Ազգային հեռուստատեսության տնօրենի տեղակալ Հարություն Հարությունյանը դիմում է հղել ՀՀ գլխավոր դատախազ Բորիս Նազարյանին՝ բացարկ հայտնելով գործի նախաքննությունն իրականացնող ՀՀ զինդատախազությանը: Ըստ դիմումի, նման քայլին դրդել են իր նկատմամբ նախաքննական մարմնի կողմից իրականացվող կամայականությունները, որոնք չէին կարող կատարվել «առանց զինվորական դատախազ Գ. Ջհանգիրյանի եւ քննչական խմբի ղեկավար Ա. Հարությունյանի գիտության եւ հանձնարարության»:

Մարտի 8-ին լրագրողների հետ հանդիպեց մեղադրյալի պաշտպան Ռուբեն Ռշտունին, որը հայտնեց, թե Հ. Հարությունյանը մարտի 3-ից հացադուլի մեջ է գտնվել՝ տեղեկացնելով այդ մասին ՆՆԻՀ Աշոտ Եղոյանին եւ խնդրելով տեղյակ պահել իր պաշտպանին: Նա զգուշացրել է, որ կշարունակի հացադուլը մինչեւ իր պաշտպանի հետ հանդիպելը: ՔՆՆԻՀ-ը, սակայն, չի կատարել մեղադրյալի խնդրանքը, իսկ հացադուլը դադարեցվել է մարտի 6-ին պաշտպանի հորդորով, որը պատահականորեն էր այցելել իրեն:

Ըստ Հ. Հարությունյանի դիմումի, պաշտպանի գնալուց հետո ՆՆԻՀ Եղոյանը մի քանի անձանց հետ իրեն հրավիրել էր զինդատախազություն, որտեղ ճաշել էին, ապա, ինչպես պնդում է մեղադրյալը, ՆՆԻՀ Եղոյանի հյուրասիրած սուրճն ըմպելուց հետո սկսվել է գլխապտույտ, սրտխառնուք, տեսողության կտրուկ վատթարացում, կորցրել է ինքնակառավարումը: Քննիչը հարցեր է տվել Տիգրան Նաղդալյանի, Նաիրի Հունանյանի մասին, ապա ներկայացրել է տպագիր թղթեր եւ առաջարկել ստորագրել դրանք, որոնք, որքանով նա ի վիճակի է հիշել, չի ստորագրել: «Երեկոյան ուշ, երբ ինձ բերեցին մեկուսարան, ես վերջնականապես համոզվեցի, որ թունավորված եմ սուրճով հրամցված ինչ-որ դեղից, սրտխառնոցը, ընդհանուր թուլությունը եւ տեսողության կտրուկ վատթարացումը շարունակվում է արդեն երրորդ օրը», ասվում է Հարություն Հարությունյանի՝ գլխավոր դատախազին ուղղված դիմումի մեջ:

Մեղադրյալը հայտնում է նաեւ, որ իր կյանքը վտանգի տակ է, որ ինքն անհանգստացած է նաեւ իր ընտանիքի անդամների անվտանգության համար. «Հայտարարում եմ նաեւ, որ այսուհետեւ ոչ մի ցուցմունք չեմ տալու, ոչ մի փաստաթուղթ չեմ ստորագրելու: Միաժամանակ պահանջում եմ, որ ինձ բանտախցից դուրս չհրավիրեն առանց իմ պաշտպանին հրավիրելու»:

Տես էջ 2

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վարդան Օսկանյան. Հոկտեմբերի 27-ի դեպքերը բացասական ազդեցություն ունեցան արտաքին քաղաքականության վրա

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: «Եթե նկատել եք, ես անձամբ՝ որպես արտգործնախարար, մինիմումի եմ հասցրել իմ ակտիվությունը արտերկրում: Արդեն երրորդ շաբաթն է, որ որեւէ ուղեւորության չեմ գնում», Ազգային ժողովի մարտի 8-ի նիստում հայտարարեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը:

Արտգործնախարարի խոսքերով, հոկտեմբերի 27-ի դեպքերը բավականին բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի արտաքին քաղաքականության վրա. «Այն երկրները, որոնք հետաքրքրություն ունեն Հայաստանի եւ տարածաշրջանի նկատմամբ, տպաստում են, թե ինչպիսի զարգացումներ կլինեն Հայաստանում»: Նախարարը խոստովանեց, որ դժվար է նման պայմաններում գնալ եւ բանակցություններ վարել, խոստումներ տալ, պայմանավորվածություններ ձեռք բերել:

Պրն Օսկանյանը նշեց, որ ամենաբացասական ազդեցությունը եղել է ԼՂ խնդրի կարգավորման գործընթացի վրա, եւ դրա անմիջական արտահայտությունն է, որ այսօր բանակցությունները համարյա թե «փակվել են», ինչի հիմնական պատճառը Հայաստանի ներքաղաքական իրավիճակն է: «Այնքան ժամանակ, որ մեր քաղաքական իրավիճակը չի բարելավվի, ես ուղղակի չեմ տեսնում որեւէ հնարավորություն, որ կարողանանք լուրջ աշխատել այդ ուղղությամբ: Խաղաղ լուծումը ենթադրում է կոմպրոմիսային տարբերակով լուծման գնալ: Իսկ կոմպրոմիսային տարբերակի շուրջ գալ կոնսենսուսի քաղաքական ուժերի միջեւ՝ նման պայմաններում ուղղակի հնարավոր չէ: Դեռ չեմ ասում, թե նման պայմաններում ինչպես կարելի է ժողովրդի առաջ հանել որեւէ կոմպրոմիսային տարբերակ», ընդգծեց արտգործնախարարը:

Պրն Օսկանյանը մեկ անգամ եւս հիշեցրեց, որ այսօր շրջանառության մեջ է Մինսկի խմբի ներկայացրած վերջին առաջարկը, եւ Հայաստանն աշխատում է այդ առաջարկության վրա. «Փորձեր են արվում, որ առաջարկությունը վերջիվերջո ընդունելի դառնա նաեւ Ադրբեջանի համար, որպես բանակցությունների հիմք, որը թույլ կտա Մինսկի խմբի շրջանակներում ԼՂ-ի մասնակցությամբ բանակցությունները շարունակել»:

Ռուսաստանի հետ հարաբերություններում Հայաստանն առաջնորդվում է մեծ պայմանագրի դրույթներով, որը ենթադրում է ստրատեգիական գործընկերություն եւ համագործակցություն: Ըստ նախարարի, երկու երկրների հարաբերություններում չկա որեւէ փոփոխություն, չկա Հայաստանի նկատմամբ «կոշտացում Ռուսաստան կամ որեւէ մեկ այլ երկրի կողմից»: ՆԱՏՕ-ին անդամակցելու վերաբերյալ ՌԴ նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինի վերջին հայտարարության կապակցությամբ պրն Օսկանյանը նշեց, որ այն «պետք է դիտել իր կոնտեքստում եւ դրանից հետո արված մեկնաբանությունների շրջանակներում»: «Մենք չենք գտնում, որ դեռեւս մոտալուտ է Ռուսաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին: Այնպես որ, Հայաստանին դեռեւս չի մտահոգում այդ հարցը որեւէ ձեւով կամ չի պարտադրում որեւէ դիրքորոշման հասակեցում», հայտարարեց ԱԳ նախարարը: Պրն Օսկանյանը կարծում է, որ նման հայտարարությունը ենթադրում է «հարաբերությունների լավացում, լարվածության մեղմացում, որը ողջունելի է Հայաստանի կողմից, որովհետեւ մեր տարածաշրջանային քաղաքականության հիմնական սկզբունքը փոխլրացումն է»: Նախարարը վստահ է, որ քանի դեռ «Ռուսաստան-ՆԱՏՕ, Ռուսաստան-Արեւմուտք հարաբերությունները լավ մակարդակի վրա են, հեշտ կլինի այդ կոմպլեմենտարության սկզբունքի կիրառումը մեր տարածաշրջանում»:

Բախտախաղային բիզնեսի 2 հսկաների պայքարում Քըրքորյանը խփեց ջեքփոթը

«Ազգի» շաբաթ օրվա համարում ներկայացրել էինք լասվեգասյան բախտախաղային մեծ բիզնեսի երկու հսկաների՝ MGM Grand Incorporation-ի եւ Mirage Resorts Incorporation-ի միջեւ, ի դեմս իրենց գլխավոր սեփականատերեր Քըրք Քըրքորյանի եւ Ստիվ Ուինի, ծավալված առուծախի պայքարը մանրամասնությամբ: Երկուշաբթի գիշերը ավարտվեցին սակարկությունները, եւ մեր հայրենակից, ազգային մեծ բարեւար Քըրքորյանի MGM ընկերությունը գնեց մրցակից Mirage-ը՝ բախտախաղային մի ողջ հարստություն, որի կազմի մեջ են մտնում «Միրաժ», «Թրեժըր Այլենդ» եւ շուրջ 2 միլրդ դոլար արժեցող «Բելաջիո» հյուրանոց-կազինոները:

«Ուոլ սթրիթ ջոռնլի» կողմից «ուղիղ ջեքփոթին խփեց» որակված գործարքում Քըրքորյանի ընկերությունը վճարելու է 4,4 միլրդ դոլար կանխիկ եւ 2 միլրդ դոլար հետագայում վճարվելիք գումար՝ բանակցությունների սկզբում Mirage-ի 17 դոլար գնահատված յուրաքանչյուր բաժնետոմսի դիմաց վճարելով 21 դոլար: Միաժամանակ, Քըրքորյանի ընկերությունը նախատեսում է շուրջ 1 միլրդ դոլարի նոր բաժնեթղթեր հրատարակել՝ գործարքը ֆինանսավորելու համար, մինչ Mirage-ը պարտավորվում է 135 մլն դոլար հատուցում վճարել համաձայնության ձախողման դեպքում:

Գործարքը, որ բախտախաղային մեծ բիզնեսում համարվում է հին դարաշրջանի ավարտ եւ նորի սկիզբ, բնականաբար մեծ իրարանցում առաջացրեց Նյու Յորքի արժեթղթերի շուկայում: Մեկ ժամ հետո արդեն շուրջ 3 դոլարով ավելացել էր Mirage-ի արժեթղթերի գինը, մինչ ամերիկյան մեծ թերթերը լայն վերնագրեր էին նվիրում «ծկված» Ստիվ Ուինին եւ «անկանխատեսելի» Քըրքորյանին: Հիշեցնենք, որ վերջինս հայտնի է բախտախաղային մեծ կենտրոններ կառուցելու եւ անմիջապես դրանք վաճառելու եւ, ավելի տարօրինակ, նոր գնածը իսկույն վերավաճառելու ու նորից գնելու իր մարտավարությամբ:



Մասխադովը բացառիկ ականատեսներ էր թողարկում

ՍՐՈՌԻ, 8 ՄԱՐՏ, ՄՆԱՐՔ: Կալանավորվել է Աղղունում Ասլան Մասխադովի անձնական կարգադրությամբ ստեղծված ռազմական գործարանի տնօրենը: Ռուսաստանի զանգվածային լրատվամիջոցների հաղորդման համաձայն, գործարանում արտադրվում էին 82 մմ տրամաչափի ականանետներ, որոնք նախատեսված են լեռնային մարտերի համար: Ականանետն օգտագործման առումով պարզ է ու հարմար փոխադրման համար: Դրա արտադրության գործում ներգրավված էր ընդամենը երկու բանվոր: Կալանավորվել է նաեւ ականանետի կոնստրուկտորը: Նա մի երիտասարդ մասնագետ է ԱՊՀ երկրներից մեկի տեխնիկական բուհի շրջանավարտ:

ԱՅԺ

Տարածաշրջանում, հետեւաբար Հայաստանում, ՆԱՏՕ-ի զինվորական պատասխանատուն Թուրքիան է

ՆԱՏՕ-ի հրամանատարությունը փորձում է գրել հայերի մտահոգությունը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ
Երեւան-Բրյուսել

Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ ուժերի գլխավոր հրամանատարության շտաբ-կայանը բելգիական փոքրիկ գավառաքաղաքում է՝ Մոնսում, եթե Բրյուսելում տեղաբաշխվել է ՆԱՏՕ-ի քաղաքական ղեկավարության սերուցքը, ապա զինվորականները գերադասել են կենտրոնից հեռու: Հայաստանյան պատվիրակությունը Մոնս ժամանեց մարտի 7-ին, պաշտոնական ընդունելությունը եւ բանավեճ-մտքերի փոխանակությունը վարում էր SHAPE-ի (Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ ուժերի գլխավոր հրամանատարության) աշխատակազմի ղեկավարի տեղակալ փոխադմիրալ Սանֆելիցի դ'Սոնտեֆորտեն:

Հիմնական հանդիպումները տեղի ունեցան գործընկերության համադրման օղակում (PCC), ուր ներկայացված է նաեւ Հայաստանը՝ որպես «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի անդամ: Հայաստանի ներկայացուցիչը գործընկերության համադրման օղակում կարի մայոր Դավիթ Տոնոյանն է, որի զինվորական հագուստի թեւին մեր եռագույնն էր: PCC կենտրոնակայանի եւ SHAPE-ի առաջին հարկում հանդիսավոր շարված էին ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի ՆԱՏՕ-ի դաշնակից 45 պետությունների դրոշները՝ Ալբանիայի եւ Ադրբեջանի կողքին Հայաստանինը:

PCC-ի ծրագրում, ինչպես նաեւ գործընկերության շրջանակում Կենտրոնական Ասիայի ու Կովկասի պատասխանատուն Թուրքիան է, եւ երբ մեր արտգործնախարարության խոսնակ Արա Պարոյանը հետաքրքրվեց, թե ՆԱՏՕ-ի գլխավոր հրամանատարությունն ինչպես է գնահատում Հայաստանի մասնակցությունը գործընկերության համադրման օղակում, փոխգնդապետ Սավաս Բիչերը բազմաբնակ ժպտալով պատասխանեց՝ ոչ, ինքը բավարարված չէ, իսկ Հայաստանի պասիվությունը բացատրեց զուտ ֆինանսական սուղ հնարավորություններով, բայց միաժամանակ շեշտեց, որ իր ձեւակերպումը քաղաքական է:

Տես էջ 5

ՈՒՇԱԳԻՐ

Կանանց հանրապետական խորհուրդն անընդունելի է համարում վերջնագրով խոսելը

Իբրեւ օրինակ Մարտի 8-ին անգամ կանանց ու տղամարդկանց բաժանում չի անում

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը Մարտի 8-ի առիթով հրամանագիր է ստորագրել՝ հանրապետությունում կանանց վիճակի բարելավման եւ իշխանության օղակներում նրանց հավասարապես ընդգրկելու մասին, յուրաքանչյուր տարվա մարտի 1-ին հաշվետվության սպասելով: ԿՀԽ նախագահ Նորա Հակոբյանը՝ արտահայտելով իր ղեկավարած կազմակերպության տեսակետը, հայտնեց, որ ԿՀԽ-ն բացառում է ուժի դիրքերից պետությանն ու հասարակությանն առնչվող որեւէ հարցի լուծումը: «Անցել է ավելի քան չորս ամիս, եւ զարհանամուտին մենք նորից հայտնվել ենք ազգային միաբանությունը պառակտող կոշտ ելույթների, հայտարարությունների, փոխադարձ վերջնագրերի ժամանակահատվածում: Կանայք կտրականապես մերժում են ուժի, վերջնագրերի կործանարար քաղաքականությունը: Մեր հասարակությունը խորապես հոգնել է քաղաքական ցնցումներից եւ երկրի ապագայի մշուշապատ անորոշությունից», հանրապետության կանանց տարադրությունները արտահայտելով, հայտնեց տիկին Հակոբյանը:

ԿՀԽ նախագահն ավելացրեց, որ գալիք սպառնալիքների զգացումը իրենց պարտադրում է կրկին հորդորել իշխանության բոլոր ճյուղերին, քաղաքական բոլոր ուժերին՝ իրականացնելու ստեղծված իրավիճակին համահունչ համապետական, միասնական քայլեր: Ժամանակն է միաբանության կոչերից անցնելու գործնական գործունեության, զբաղվել ազգային անվտանգության, տնտեսության խնդիրներով:

Անդրադառնալով «Միասնության» հայտարարության վերջնագրի հասցեին, տիկին Հակոբյանը նույնպես այն համոզմունքն ուներ, որ առիթը պատեհ չէր հայտնի երկու անձանց հրաժարականը պահանջելու համար, եւ անընդունելի է համարում լրատվությունը սահմանափակելու նրանց կոչերը: «Մամուլի ազատությունն իսկապես մեր հանրապետության ժողովրդավարական զարգացումների կարեւորագույն ցուցանիշ է, ազգանպաստ գործունեության, զբաղվել ազգային անվտանգության, տնտեսության խնդիրներով:

Անդրադառնալով «Միասնության» հայտարարության վերջնագրի հասցեին, տիկին Հակոբյանը նույնպես այն համոզմունքն ուներ, որ առիթը պատեհ չէր հայտնի երկու անձանց հրաժարականը պահանջելու համար, եւ անընդունելի է համարում լրատվությունը սահմանափակելու նրանց կոչերը: «Մամուլի ազատությունն իսկապես մեր հանրապետության ժողովրդավարական զարգացումների կարեւորագույն ցուցանիշ է, ազգանպաստ գործունեության, զբաղվել ազգային անվտանգության, տնտեսության խնդիրներով:

Անդրադառնալով «Միասնության» հայտարարության վերջնագրի հասցեին, տիկին Հակոբյանը նույնպես այն համոզմունքն ուներ, որ առիթը պատեհ չէր հայտնի երկու անձանց հրաժարականը պահանջելու համար, եւ անընդունելի է համարում լրատվությունը սահմանափակելու նրանց կոչերը: «Մամուլի ազատությունն իսկապես մեր հանրապետության ժողովրդավարական զարգացումների կարեւորագույն ցուցանիշ է, ազգանպաստ գործունեության, զբաղվել ազգային անվտանգության, տնտեսության խնդիրներով:

Անդրադառնալով «Միասնության» հայտարարության վերջնագրի հասցեին, տիկին Հակոբյանը նույնպես այն համոզմունքն ուներ, որ առիթը պատեհ չէր հայտնի երկու անձանց հրաժարականը պահանջելու համար, եւ անընդունելի է համարում լրատվությունը սահմանափակելու նրանց կոչերը: «Մամուլի ազատությունն իսկապես մեր հանրապետության ժողովրդավարական զարգացումների կարեւորագույն

ցուցանիշ է, ազգանպաստ գործունեության, զբաղվել ազգային անվտանգության, տնտեսության խնդիրներով:

Անդրադառնալով «Միասնության» հայտարարության վերջնագրի հասցեին, տիկին Հակոբյանը նույնպես այն համոզմունքն ուներ, որ առիթը պատեհ չէր հայտնի երկու անձանց հրաժարականը պահանջելու համար, եւ անընդունելի է համարում լրատվությունը սահմանափակելու նրանց կոչերը: «Մամուլի ազատությունն իսկապես մեր հանրապետության ժողովրդավարական զարգացումների կարեւորագույն ցուցանիշ է, սակայն հասարակությունն իրավունք ունի պետական լրատվական մարմինների ղեկավարների պատասխանում տեսնելու վստահություն ներշնչող անձանց», հայտնեց Նորա Հակոբյանը: ԱՀ-ի տնօրեն Տիգրան Նաղդալյանին նա այդպիսին չի համարում «ի սկզբանե խնդրո առարկա այդ նշանակումը ծեռբերումն է, սակայն հասարակությունն իրավունք ունի պետական լրատվական մարմինների ղեկավարների պատասխանում տեսնելու վստահություն ներշնչող անձանց», հայտնեց Նորա Հակոբյանը: ԱՀ-ի տնօրեն Տիգրան Նաղդալյանին նա այդպիսին չի համարում «ի սկզբանե խնդրո առարկա այդ նշանակումը

խոցելի էր, քանզի չէր բխում հանրության շահերից»:

Ասվածը նա մեկնաբանեց հիշեցնելով վերջին նախագահական ընտրություններում թեկնածուներից մեկի կողմից Տ. Նաղդալյանին գտնվելը եւ մյուս թեկնածուին անխնա քննադատելը: Ընդունելով, որ փաստաբանների ասուլիսը հաղորդելը դրդապատճառ չէ ԱՀ տնօրենին աշխատանքից ազատելու համար, այնուամենայնիվ գտնում է, որ հարցի հոգեբանական կողմը չպետք է անտեսել:

Ա.Ք.Պ.

Ազգային ժողովը վավերացրեց 7 միջազգային պայմանագրեր

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 8-ի նիստում ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց 6 միջազգային համաձայնագիր եւ 1 արձանագրություն:

«1992 թ. մայիսի 15-ի կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագիրը երկարաձգելու մասին» արձանագրությունը ստորագրվել է 1999 թ. ապրիլի 2-ին Մոսկվայում: Այն համարվում է «Կոլեկտիվ անվտանգության մասին» 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրված պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը, որը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1992 թ. հուլիսի 28-ին, ուժի մեջ է մտել 1994 թ. ապրիլի 20-ին: Արձանագրության նպատակն է 5 տարով երկարաձգել պայմանագրի գործողության ժամկետը:

«Ստանդարտացման, չափաբանության եւ սերտիֆիկացիայի բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերում չափումների միասնականությունն ապահովելու մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1996 թվականի նոյեմբերի 3-ին Մոսկվայում: Ստորագրել են ԱՊՀ բոլոր երկրները՝ բացառությամբ Թուրքմենստանի եւ Մոլդովայի Հանրապետության:

«Սպառազինության եւ ռազմական տեխնիկայի միջպետական ստանդարտացման աշխատանքների կազմակերպման մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1995 թ. նոյեմբերի 3-ին Մոսկվայում: Չեն ստորագրել Թուրքմենստանն ու Մոլդովան, իսկ Ադրբեջանը ստորագրել է հատուկ կարծիքի առկայությամբ:

«Խաղաղության պահպանման գործունեություններին մասնակցելու համար Անկախ Պետությունների Համագործակցության համար մասնակից պետությունների զինվորական ու քաղաքացիական անձնակազմի պատրաստման ու ուսուցման մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1996 թ. հունվարի 19-ին Մոսկվայում: Չեն ստորագրել Ադրբեջանը, Ղազախստանը, Մոլդովան, Թուրքմենստանը եւ Ուկրաինան: Բելառուսը ստորագրել է վերապահումով, որ խաղաղապահ ուժերի կազմի համար զորակազմ չի ուղարկում:

«ՀՀ կառավարության եւ ՌԴ կառավարության միջեւ 1999-2001 թթ. ՀՀ-ին բնական պլմասքներ մատակարարելու մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1998 թ. նոյեմբերի 26-ին Մոսկվայում: Համաձայնագրով ռուսաստանյան կողմը մատակարարելու է անհրաժեշտ բնական գազմասներ առանց վերարտահանման իրավունքի:

«ՀՀ եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ճաղոնական դրամաշնորհի (Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագիր) մասին» համաձայնագիրը ստորագրվել է 1999 թ. հոկտեմբերի 20-ին Երեւանում: Ընկերակցությունը Հայաստանին կտրամադրի 494,8 հազար ԱՄՆ դոլար, որը նախատեսվում է օգտագործել համայնքների եւ քաղաքային շրջանների կարողությունների զարգացմանն ուղղված խորհրդատվական ծառայությունների մատուցման, ՀՀ Սոցիալական ներդրումների հիմնադրամի աշխատակիցների ուսուցման կազմակերպման նպատակով:

«ՀՀ եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ տրանսպորտային ծրագրի նախապատրաստման համար ճաղոնական դրամաշնորհի» համաձայնագիրը ստորագրվել է 1998 թ. փետրվարի 11-ին Երեւանում: Բանկը Հայաստանին կտրամադրի 486 հազար ԱՄՆ դոլարի դրամաշնորհ:

ՀԱՍԱՐՈՍ

ԼՂՀ-ում կանանց խնդիրներով զբաղվում են մարդասիրական կազմակերպությունները

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 8 ՄԱՐՏ, ՏՆԱՐՔ: Հետպատերազմյան Ղարաբաղում կանանց վիճակը ծանր է: Դժբախտաբար, հանրապետության իշխանություններն առայժմ ի զորու չեն կանոնավոր կերպով զբաղվել թույլ սեռի խնդիրների լուծմամբ, որոնցից ամենացավոցը գործազրկությունն է. ԼՂՀ-ում գրանցված գործազուրկների 90 տոկոսը կանայք են:

Ղարաբաղի կանանց մասին հոգ են տանում, գլխավորապես, մարդասիրական կազմակերպությունները: Ամերիկյան «Family care» («Հոգալ ընտանիքի մասին») կազմակերպությունը վերականգնում ու վերակառուցում է Ստեփանակերտի եւ հանրապետության շրջանների ծննդատները, հոգ տանում մոր եւ մանկան առողջության մասին: «Արիեն» բարեգործական կենտրոնը եւ «Հայ ավետարանչական համայնքը» նյութապես աջակցում են երիտասարդ մայրերին եւ նորածիններին՝ վերջիններիս ապահովելով կերով եւ հագուստով: «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամը պարբերաբար տոներին նվերներ է մատուցում Ղարաբաղի կանանց:

ԼՂՀ-ում չեն մոռանում հերոս կանանց: Անցյալ ամսվա կեսերին Ստեփանակերտում հրապարակավ նշվեց նշանառու Մարգարիտ Սարգսյանի 40-ամյակը, որը 1993 թվականի օգոստոսին զոհվեց հայրենիքի ազատության համար մղվող մարտերից մեկում:

Իրան-Հայաստան հարաբերություններում երրորդ կողմն ավելորդ է

ՍՏԱՍԲՈՒԼ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թեհրանից շարունակում են արձագանքներ ստացվել ԱՄՆ-ի առեւտրի նախարարի խորհրդական Յան Կալիցկու Իրան-Հայաստան գազատարի կառուցման նախագծի նկատմամբ արտահայտած դիրքորոշման առնչությամբ: Այս կապակցությամբ «Իրնա» գործակալությունը տարածել է ԻԻՀ ԱԳ նախարարության պատասխանատուներից մեկի հայտարարությունը, որով ԱՄՆ-ի այս քայլը որակվել է որպես տարածաշրջանի երկրների ներքին գործերին միջամտելու փորձ: Ըստ պատասխանատուի, նման հայտարարությունները հակասում են համագործակցության ոգուն եւ պետությունների անկախության սկզբունքին: «Իրանի եւ Հայաստանի հարաբերությունները միայն այս երկրների գործն են, եւ Իրանը թույլ չի տա երրորդ կողմին միջամտել հարեւանների հետ իր հարաբերություններին», հայտարարել է իրանցի դիվանագետը:

Երեւանում տեղի կունենա ազգային-մշակութային կազմավորումների համագումար

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՏՆԱՐՔ: Հայաստանի նախագահի ազգային փոքրամասնությունների գծով խորհրդական Ռազմիկ Դավոյանի նախաձեռնությամբ մարտի 12-ին Երեւանում տեղի կունենա Հայաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմավորումների համագումար: Այդ մասին հաղորդեցին երկրի նախագահի խորհրդականի գրասենյակից:

Համագումարում նախատեսվում է համակարգող խորհուրդ ստեղծել, որը հետագայում կվերակազմավորվի Հայաստանի ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության պետական մարմնի: Խորհուրդը կիրակացնի կապերը բնակչության եւ պետկառուցվածքների միջեւ:

Համագումարի աշխատանքին կմասնակցեն հանրապետության ազգային փոքրամասնությունների 11 մշակութային համայնքների ներկայացուցիչները՝ եզդիները, ասորիները, ռուսները, հույները, ուկրաինացիները, հրեաները եւ այլք: Պաշտոնական գնահատականներով, Հայաստանում ազգային փոքրամասնությունները կազմում են բնակչության 2-3 տոկոսը:

Նախատեսվում է, որ համագումարի աշխատանքներին կմասնակցեն նաեւ Հայաստանի նախագահը, Աժ խոսնակը, վարչապետն ու կառավարության, քաղաքական կուսակցությունների, իրավապահ եւ միջազգային կազմակերպությունների անդամները, կրոնական դավանանքների ներկայացուցիչները:

Հարություն Հարությունյանը բացարկ է հայտնել ՀՀ զինդատախազությանը

Սկիզբը էջ 1

Մեղադրյալն իր դիմումի մեջ անդրադարձել է նաեւ ավելի վաղ իր նկատմամբ տեղի ունեցած, իր խոսքերով, պատիժներին: Ըստ նրա հայտարարության, ինքը զրկված է եղել իր նախկին պաշտպան Ժորա Խաչատրյանի հետ առանձնատեսակցություններ ունենալու իրավունքից՝ ամբողջ հունվար ամսվա ընթացքում եղել է ընդամենը 3 առանձնատեսակցություն: Ամեն անգամ առանձնատեսակցությունը մերժվելուց եւ պաշտպանի հեռանալուց հետո, ըստ մեղադրյալի, ինքը բերվում էր քննիչների մոտ, որտեղ սկսվում էր «մշակումը գեստապոյական մեթոդներով», որը շարունակվում էր 1 ժամից 10 ժամ անընդմեջ: Այսպես, ըստ դիմումի, հունվարի 22-ին Հ. Հարությունյանը «4 անգամ հանդիպել է Նաիրի Հունանյանի հետ», ամեն հանդիպումից հետո սկսվում էին ծեծն ու հայհոյանքները քննչական խմբի անդամների եւ խմբի մեջ չմտնող 9 անձանց կողմից, ինչն ուղեկցվել է նաեւ հոգեբանական ճնշմամբ: Մեկ ուրիշ անգամ նույն մեթոդները կիրառվել են, ըստ մեղադրյալի, Ալեքսան Հարությունյանի, Տիգրան Նաղդալյանի դեմ ցուցմունքներ ստանալու նպատակով:

Հարություն Հարությունյանը գլխավոր դատախազին տեղեկացնում է նաեւ, որ Ռուբեն Ռշտունու կողմից իր պաշտպանությունը ստանձնելուց հետո իրենից համաձայնություն է վերցվել առանց պաշտպանի հարցաքննվելու մասին, սակայն պաշտպանի գալուց հետո վերջինիս պահանջով ցուցմունքները դադարեցվել են, ապա փետրվարի 3-ին Ռ. Ռշտունին ականատես է եղել, թե ինչպես մինչեւ իր գալը քննիչներ Այվազյանը եւ Հովհաննիսյանը «դաստիարակչական աշխատանք էին տանում»՝ համոզելով իրեն փոխել նախորդ ցուցմունքը եւ «ճիշտ ցուցմունք տալ»:

Ռուբեն Ռշտունին հայտնեց, որ ինքը մտադիր է բողոքարկել Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը Հարություն Հարությունյանի կալանքը երկարացնելու մասին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակող
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ազգային

ԱՍՈՒԼԻՍ

Արժանապատիվ հեռանալու արվեստը

Ռուսերն ասում են՝ Уходя-уходи!

Մի քանի դար առաջ ֆրանսիացի փիլիսոփա Միշել Մոնտենը գրեց «Արժանապատիվ ապրելու արվեստը» աշխատությունը: Այսօրվա Հայաստանում հանապազօրյա հացի պես պահանջվում է մի մտավորական, որը կգրեր ու մեր քաղաքական գործիչներին կնվիրեր «Արժանապատիվ հեռանալու արվեստը»:

Սակայն վախենամ, որ անիրականանալի է այս երազանքը, քանզի մեր «չստացված» տեսակի գործիչների ու բանաստեղծների մեծ մասը, հակառակի պես, զբաղված է նույն քաղաքական գործունեությամբ: Ինչեւէ, հիշյալ աշխատության գրվելու դեպքում չէր խանգարի մեկ օրինակ նվիրել նաեւ «Ազգային առաջադիմություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բաղդասարյանին՝ երբեմնի պատգամավորին եւ երբեմնի հիշականին: Որովհետեւ երբ հեռանում ես ճիշտ ժամանակին, հետո այլեւս սիրված չես լինում բեմում կանգնած ծեծված ճշմարտություններ կրկնել, առավել եւս, երբ ժողովրդի անունից ես հանդես գալիս: Եվս մի ծեծված իրողություն. այս աշխարհում ամեն մեկն ու ամեն ինչն իր անունն ունի, մասնավորապես, ժողովուրդը ժողովուրդ է, Ալբերտ Բաղդասարյանը՝ Ալբերտ Բաղդասարյան: Այս անառարկելի փաստը, երեւում է, չի գոհացնում պրն Բաղդասարյանին. նա անպայման ուզում է հանդես գալ ժողովրդի անունից:

Դե, ժողովուրդն էլ անշնորհակալ «գործոն» է եւ, եթե չհիշեցնես, սեփական նախաձեռնությամբ չի հիշի իր նվիրյալներին: Հիշեցնելու եւ զավակի պես ուղղորդելու միտումով էլ հրավիրված էր երեկվա ասուլիսը: Ասել կուզի՝ սուբյեկտիվ պատճառներ էր հետապնդում, այլապես քաղաքական «կռիվ-կռիվի» այս խառը ժամանակներում ինչ-որ մեկը հազիվ թե ասուլիս հրավիրեր օբյեկտիվ պատճառներով: Որովհետեւ այդ օբյեկտիվ պատճառների համար էլ ասելիք է հարկավոր, նոր, առողջ ու հիմնավորված մտքեր, որոնք չէին կրկնի այլոց մտքերը:

Այսպիսով, ասուլիսի ընթացքում «բարձագրիկ» անգիր արած ճշմարտությունները երկրում ստեղծված ծանր ներքաղաքական կացության, ժողովրդի կորած վստահության, տնտեսության անկյալ վիճակի եւ այլնի մասին: «Իշխանություններն իրենց ընդամենը հոչակում են պատասխանատու կատարվելիք «նորարարությունների» համար, սակայն արդեն իսկ պարզ է, որ, ինչպես նախորդները, նրանք էլ ոչնչի համար չեն կրի պատասխանատվություն՝ հանդուրժող, մեկը մյուսին ասպարեզից դուրս մղելու մոլուցքով տարված թեւերի պատանդ դարձնելով պետության եւ ժողովրդի ճակատագիրը»:

Ստահոգություն արտահայտելով պայթյունավտանգ իրավիճակի, «ռեւանշիստական ուժերի եւ առանձին անհեռատես գործիչների» կողմից հասարակական մթնոլորտի անհարկի շիկացումների առթիվ, որը «հղի է քաղաքացիական բախումների վտանգով՝ արցախյան ազգային-ազատագրական պայքարի արդյունքները եւ պետականության բուն գոյությունը հարցականի տակ դնելու հեռանկարով», դատիչը սթափության կոչ է ուղղել նախագահին, վարչապետին, ԱԺ-ին եւ քաղաքական ուժերին՝ պահանջելով «գիտակցել պահի լրջությունը, ձեռնպահ մնալ սադրիչ եւ ազգավնաս գործողություններից եւ լծվել իրենց անմիջական պետական, հասարակական պարտականությունների կատարմանը»:

Ի՞նչ ասել կուզի՝ սուբյեկտիվ պատճառներ էր հետապնդում, այնինչ 98-ից հետո եկածներն այլեւս չէին դիմում:

Իսկ մինչ 98-ը նրանց դիմելուց ի՞նչն էր փոխվում, ավելի ժողովրդավա՞ր էին երեւի: «Եթե նախորդ իշխանությունները չդիմեին ժողովրդին, այսօրվա վիճակը դեռեւս հինգ տարի առաջ կունենայինք», շարունակում են նրանք: Ինչպիսի՞ մխիթարություն: Սակայն, պարզվում է, այնուամենայնիվ կունենայինք:

«Ազգային առաջադիմությունն» անդրադարձավ նաեւ պետբյուջեին, որը մարտի 7-ին է հաստատվել, եւ անդրադարձը գոնե ժամանակավրեպ չէր: «Այս բյուջեով ժողովուրդն ավելի է աղքատանալու», ասացին դրանք: Փաստաբաններ Սահակյանի եւ Ոստունու ասուլիսին եւս անդրադարձան՝ գնահատելով դրական ու տեղին: Այնուհետեւ որակական տարբերություն «հայտնաբերեցին» այսօրվա եւ 93-ի արտագաղթերի միջեւ՝ վերլուծելով, որ այն ժամանակվա մեկնողները մի օր վերադառնալու մտքով էին լքում հայրենիքը, իսկ այսօրվա մեկնողները՝ այլեւս երբեք չվերադառնալու: Քաղաքական ուժերի հարաբերակցության՝ մասին խոսելիս նշեցին, թե խորհրդարանում այսօր չեն տեսնում լուրջ քաղաքական դաշտի առկայություն, որպեսզի այդ դաշտում նաեւ ընդդիմություն, առողջ ընդդիմադիր ուժեր տեսնեին: Ինչ վերաբերում է իրենց, ապա ոչ մի քաղաքական ուժի հետ էլ չեն համագործակցում (կամ էլ հակառակը՝ իրենց հետ չեն համագործակցում- Ա. Բ.):



Այսպիսին է իրերի դրությունը: Հանրահայտ փաստեր են արձանագրում՝ ասես չարախնդալով: Չէ՞ որ իրենք էլ այլեւս ոչնչի համար պատասխանատվություն չեն կրում: Սահմանադրական փոփոխությունների, 96-ի նախագահական տխրահռչակ ընտրությունների, օտարերկրյա վարկերից կախման մեջ գտնվելու, ներքաղաքական վերջին անցուդարձերի վերաբերյալ նրանց գնահատականներն ու մտքերը հարկ չենք համարում ներկայացնել՝ արձանագրելով միայն, որ դրանց մասին խոսվել է: Խոսվել է այն, ինչը վաղուց հայտնի է եւ բազմիցս կրկնված:

Համփոփումն՝ կցանկանայինք արժանապատիվ հեռանալ «Ազգային առաջադիմության» ասուլիսից՝ որպես մասնակի փաստից, եւ փորձել ընդհանրացում կատարել. ասուլիսացավը մեզանում, հիրավի, անբուժելի հիվանդություն է դարձել: ԴԱՎ-ի դեմ անգամ Հայաստանում միջոց գտնվեց, ասուլիսացավի դեմ՝ ոչ:

ԼՈՒԻԶ ԲԱԲԱՅԱՆ

Սոցիալիստական կազմակերպությունների «Արդարություն» դաշինքը տագնապած է

Սոցիալիստական կազմակերպությունների «Արդարություն» դաշինքը, որը միավորում է Հայաստանի դեմոկրատական, ՍԴ հնչակյան կուսակցությունները եւ Կոմունիստների միությունը, մարտի 7-ին ընդունել է հայտարարություն, որ, մասնավորապես, ասված է. «1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո երկրում առաջացել է իշխանության կաթված: Օր-օրի խորանում է ներքաղաքական ճգնաժամը: Իշխանությունները բաժանվել են անհաղթահարելի պատնեշներով, ինչպես նաեւ ազգային-ազատագրական պայքարի արդյունքները եւ պետականության բուն գոյությունը հարցականի տակ դնելու հեռանկարով», դատիչը սթափության կոչ է ուղղել նախագահին, վարչապետին, ԱԺ-ին եւ քաղաքական ուժերին՝ պահանջելով «գիտակցել պահի լրջությունը, ձեռնպահ մնալ սադրիչ եւ ազգավնաս գործողություններից եւ լծվել իրենց անմիջական պետական, հասարակական պարտականությունների կատարմանը»:

ԷՆԵՐԳԻԱ

Մեղրիի ՀԷԿ-ի շինարարությունը նախատեսվում է սկսել 2000 թվականից

ԵՐԵՎԱՆ, 8 ՄԱՐՏ, ՍՆԱՐ: Բազմիցս նշվել է, որ նախատես ծրագրված է 2004 թ. դադարեցնել Հայկական ԱԷԿ-ի աշխատանքը, որին փոխարինվող հզորությունները որոնվում են արդեն այսօրվանից: Այս մասին հաղորդել է ՀՀ էներգետիկայի նախարարության Ռազմավարական ծրագրերի եւ ինվեստիցիաների նախապատրաստման բաժնի գլխավոր մասնագետ Ալեքսանդր Քոչարյանը:

Ըստ նրա ՀԱԷԿ-ի աշխատանքը դադարեցնելուց հետո հայկական էներգահամակարգը լրացուցիչ հզորությունների ներդրման կարիք կունենա: Ներմուծվող էներգակիրների թանկության, տարածաշրջանային, ինչպես նաեւ արտաքին քաղաքական որոշ գործոններ առաջնահերթ պլան են մղում ներքին ջրապաշարների օգտագործման խնդիրը:

Էներգետիկայի նախարարությունը դրականորեն է մոտենում հանրապետության տեղական հիդրոռեսուրսների լիարժեքորեն օգտագործման հիմնահարցին: Արդեն կառուցվել են 3 փոքր ՀԷԿ-եր: Նախագծային փուլում են գտնվում այնպիսի խոշոր հիդրոկայանների աշխատանքները, ինչպիսիք են Մեղրիի, Շնողի եւ Լոռի-Բերդի ՀԷԿ-երը:

Արդեն կատարվել է Մեղրիի ՀԷԿ-ի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը: Կայանը կառուցվելու է Արաքսի վրա, Մեղրի քաղաքի մոտ: Նախագծային հզորությունը 75,5 մվտ է, նախատեսվում է, որ տարեկան կարտադրվի 410 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա: Ըստ նախնական նախագծային հաշվարկների ՀԷԿ-ը գնահատվել է 104 մլն դոլար: Մեղրիի հիդրոկայանի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը կատարվել է «Հայհիդրոէներգանախագիծ» ինստիտուտում, ըստ նախագծի, կայանի ինքնածախսածածկումը կտեւի մոտ 10 տարի, արտադրված էլեկտրաէներգիայի ինքնարժեքը կկազմի մոտ 3,4 ցենտ:

Շնողի ՀԷԿ-ի նախագծային հզորությունը 75 մվտ է, տարեկան կարտադրվի 300 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, իսկ Լոռի-Բերդի ՀԷԿ-ի հզորությունը 70 մվտ է, այստեղ արտադրվելու է տարեկան 200 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա: Վերջին երկու կայանները իրենց տեխնիկա-տնտեսական ցուցանիշներով զիջում են Մեղրիի ՀԷԿ-ին: Շնողի եւ Լոռի-Բերդի ՀԷԿ-երը փիկային են, իսկ Մեղրիի ՀԷԿ-ը աշխատելու է բազային ռեժիմով: Ըստ պարոն Քոչարյանի, քանի որ Մեղրի ՀԷԿ-ը կառուցվելու է տահմանային Արաքս գետի վրա, պարբերաբար հայ եւ իրանցի մասնագետները հանդիպումներ են ունենում, որոնց ընթացքում քննարկվում են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Արման Դանգոյանցը՝ չորսամյա նախնական կալանքում

Արման Դանգոյանցին դատապարտելը խրվել է Հայաստանի արդարադատության մարմինների կոկորդում: Արդեն չորրորդ տարին է նա կալանքի տակ է գտնվում սպանության մեղադրանքով՝ առաջին աստյանի դատարանը նրան դատապարտում է 8-ամյա ազատազրկման: Մինչդեռ դատարանում քննարկվում է՝ ընդհանրապես սպանություն եղե՞լ է, թե՞ ոչ: Ա. Դանգոյանցի պաշտպանության հասարակական խորհուրդը տեղեկացնում է, թե նրանց բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը լսել է քրեական գործը եւ նոր վճիռ է կայացրել, որով ապացուցված չի համարել Ա. Դանգոյանցի հանցանքը եւ քրեական գործը վերադարձել է նախաքննության: (Նախաքննությունը վարել է ՀՀ նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը): Վճռաբեկ դատարանը արդեն բեկանել է վերաքննիչ դատարանի դատավճիռը եւ վերադարձրել՝ վերաքննիչ դատարանին՝ նոր դատաքննության:

Մամուլին տրամադրված հաղորդագրության մեջ ասվում է, որ այս տարիների ընթացքում Արման Դանգոյանցը գտնվում է կալանքի տակ: «Դատաքննության վերջը չի երեւում, իսկ Ա. Դանգոյանցի վիճակը շարունակում է ծանրանալ եւ բացառված չէ, որ նա կդիմի ոչ ցանկալի, սակայն հարկադրված ծայրահեղ միջոցների», ասվում է հայտարարության մեջ: Տեղեկացվում է նաեւ, որ կալանքից ազատելու նրա բոլոր միջնորդությունները մերժվել են դատարանի կողմից. «Դա քաղաքական բռնություն է՝ Արման Դանգոյանցի քաղաքացիական ազատություններն ու մարդու իրավունքները ոտնահարված են քաղաքական պատճառներով»: Արման Դանգոյանցին սատարելու կոչով հասարակական կոմիտեն դիմել է միջազգային, արտերկրյա, հայրենական իրավապաշտպան կազմակերպություններին:

Ղորոցն ու ինստիտուտը չեն տեղավորվում նույն հարկի տակ

Երեկ ԳԱԱ նախագահության շենքում բողոքի ցույցի էին հավաքվել ԳԱԱ-ի մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի աշխատակիցները: Բողոքի պատճառը ինստիտուտի շենքային մի խնդիր է, որն, ըստ աշխատակիցների, լուծվել է խիստ անարդարացի, որովհետեւ ինստիտուտից պահանջվում է մասամբ դատարկել հարազատ հարկն ու տեղավորվել մյուս մասնաշենքում: Նման խնդիր առաջացել է նույն շենքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ բիոֆիզիկայի միջազգային բարձրագույն դպրոց հիմնելու նախաձեռնության պատճառով:

Ըստ ինստիտուտի աշխատակիցների, այդ տեղափոխությունը լոկ տեղափոխություն չէ, քանզի խոսքը բջջային կլոնավորման եւ աճեցման գերզգայուն տեխնոլոգիաների լաբորատորիաների մասին է, որոնք աղտոտման դեպքում այլեւս անհնար կլինի վերագործարկել: «ԽՍՀՄ-ի օրոք հսկայական գումարների ներդրումով ստեղծված այդ լաբորատորիաների տեղահանումն ու վերականգնումն անհնար է, եւ մեզ մեր տարածից մասամբ զրկելը նշանակում է ուղղակի կասեցնել ակադեմիայի այս ինստիտուտի գործունեությունը: Չէ՞ որ նոր լաբորատորիաների մասին խոսք լինել չի կարող, քանզի վերջին երկու տարիներին ԳԱԱ-ն նույնիսկ աշխատավարձով չի աղահովել մեզ», ասաց ինստիտուտի աշխատակից Արսեն Առաքելյանը, «բայց այդ խնդիրը միայն է անհանգստացնում Սիներիկ Հայրապետյանին, որի կարծիքով, Հայաստանին մոլեկուլյար կենսաբանություն գիտությունն անհրաժեշտ չէ»:

Ս. Հայրապետյանը բիոֆիզիկայի բարձրագույն դպրոց հիմնելու նախաձեռնողն է, ինչը նա պատրաստվում է անել իր իսկ ղեկավարած, ԳԱԱ-ի համակարգում գործող բիոֆիզիկայի կենտրոնի բազայի վրա: Հիշյալ կենտրոնը տեղակայված է չարչրկված ինստիտուտի շենքում եւ չնայած, ըստ բողոքողների, դպրոցի համար պրն Հայրապետյանին ակադեմիայի մի քանի այլ շենքեր են առաջարկել, նա սկզբունքորեն պահանջում է այդ շենքի մի հատվածը:

«Այս խնդրի շուրջ երկու հարեւանները չեն կարողանում հաշտ որոշման գալ», ասաց ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը:

Այնուամենայնիվ, մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի լաբորատորիաներն առայժմ չեն տեղափոխվի: Հանգրվանային այսպիսի որոշում է կայացվել ԳԱԱ նախագահության երեկվա նիստում (հակառակ շենքի մի հատվածը դպրոցին զիջելու նախորդ որոշման): «Ամեն ինչ կմնա նախկինի պես իր տեղում, մինչեւ երկու կողմերի համար ընդունելի մի լուծման գանք», հավաստեց Ֆադեյ Սարգսյանը:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արման Նավասարդյան. Լիբանանը մեզ համար շատ կարեւոր երկիր է

1999-ին Բեյրութի ՀՀ դեսպանությունը 537 անգամ հայցնվել էր լիբանանյան արաբատառ, ֆրանսատառ մամուլում, միգուցե նաեւ դեսպան Արման Նավասարդյանի պրոֆեսիոնալ լինելու հանգամանքով կարելի է բացատրել: Սովետական դպրոցում դիվանագետներին բացատրում էին, որ լրագրողների հետ աշխատելն անհրաժեշտություն է, ասաց Լիբանանում ՀՀ դեսպանը, երբ իր հյուրասիրած «դաշնակցական» սուրճի (դառը սուրճին Լիբանանում այդպիսի անուն են տվել) վերջին ումպն էինք անում Վերդիի «Ամրասի» հնչյունների ներքո: 1999-ի դեկտեմբերի վերջին հայ համայնքի տարբեր շերտերից նրա մասին բացասական կարծիք չլսեցի: Մանրավաճառներից մեկը նույնիսկ այսպիսի միտք հայտնեց՝ շենքը, որ նվեր ենք արել, արժանի է: «Չեզ ճիշտ չեն ասել, դեսպանության այս շենքը ՀՀ սեփականությունը չէ». Նյու Նաֆաշում ՀՀ դեսպանության գեղեցիկ, ընդարձակ շինության մասին եղած տեղեկությունը ճշտեց պրն Նավասարդյանը: «Ծագումով լիբանանցի, ԱՄՆ-ում ապրող Նուբար Նազարյանը ցանկություն է հայտնել դեսպանության համար հատուկ շենք կառուցել, բայց մտադրությունն ավարտին չհասցրած մահացել է: Նրա պատգամը կատարել են մեծահարուստ եղբայրները եւ եղբոր որդին, որը հիմա Լիբանանի բնապահպանության եւ տուրիզմի նախարարն է: Ավարտելուց հետո շենքը նվիրել են ՀԲԸՄիությանը, որն էլ 5 տարի ժամանակով տվել է Հայաստանին: Վարձ չենք մուծում»: Մեր մյուս հարցերին էլ պրն դեսպանը սիրով պատասխանեց խոստովանելով նաեւ, որ «Ազգն» իր նախասիրած թերթն է:

– **Պրն Նավասարդյան, ինչպե՞ս եք գնահատում Լիբանան-Հայաստան դիվանագիտական կապերը:**

– Ըստ երեւույթին թյուր կարծիք կա, թե փոքր երկրները քաղաքական առումով չեն կարող մեծ հետաքրքրություն ներկայացնել: Լինելով Հայաստանից 3 անգամ փոքր երկիր, Լիբանանը շատ պատմատեսրերով մեզ համար շատ կարեւոր երկիր է: Նախ՝ պատմականորեն միշտ շատ մոտ ենք եղել, կարող ենք մինչեւ 4-րդ դար գնալ, երբ առեւտուր էինք անում Փյունիկիայի հետ, ավելի նոր շրջան՝ 19-րդ, եւ վերջապես եղեռնից հետո արաբական աշխարհը: Լիբանանը, Սիրիան այն երկրներն էին, որոնք ձեռ մեկնեցին, աղասան տվեցին հայ գաղթականներին: Լիբանանը հնարավորություն ընձեռեց հայ համայնքին լրիվ ինտեգրվելու լիբանանյան հասարակության մեջ միեւնույն ժամանակ չխոչընդոտելով պահպանելու հայկականությունը լեզուն, կրոնը, սովորույթները: Երկիրը կոնֆեսիոնալ համայնքային հիմքերի վրա է կառուցված, եւ այս հավասարակշռությունը միշտ աշխատում են պահել: Ընդհանրապես լիբերալ համակարգ է, ժողովրդավարությունը մեծ ավանդներ ունի այստեղ: Եթե Լիբանանին մի փոքր ծանրքաշ, կտեսնեք, որ եվրոպական շատ երկրներից առավել դեմոկրատական բան ունի, չնայած, անշուշտ, արեւելյան կնիքն էլ կա, բայց տարածաշրջանում պարզապես բացառություն կազմող երկիր է: ՀՀ անկախությունից հետո նոր հնարավորություն բացվեց, դիվանագիտական կապեր հաստատվեցին: Խորհրդային Միության ժամանակ կապեր կային Հայաստանի եւ համայնքի միջեւ, այսօր առաջնային են հայ-լիբանանյան հարաբերությունները բոլոր ուղղություններով՝ քաղաքական, մշակութային, տնտեսական: Հուսախություն՝ բոլորիս պիտի ասել, որ երկու երկրների հարաբերությունները շատ լավ են զարգանում: 1998-ին Լիբանան այցելեց ՀՀ վարչապետը, իսկ շրջադարձային կետ կարող է հանդիսանալ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցը: Սա նրա առաջին պաշտոնական այցն էր Մերձավոր Արեւելք, այն կարեւորում է նաեւ լիբանանյան կողմը: Քաղաքական մեր համագործակցությունն ընթանում է տարբեր հարթությունների վրա արտաքին գործերի նախարարությունների, միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Կարելի է ասել, որ Հայաստանը եւ Լիբանանը քաղաքական առումով ոչ մի հակասություն կամ հակամարտություն չունեցող երկրներ են: Մենք հանդես ենք գալիս Մերձավոր Արեւելքի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու օգտին, կողմ ենք էվեակել 425 բանաձեւին, որը նախատեսում է գործերի անհապաղ դուրսբերում Լիբանանի հարավից. Լիբանանն իր հերթին հանդես է գալիս դարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման օգտին, մյուս բոլոր միջազգային մեծ ու փոքր հարցերի շուրջ ունենք հասկացողություն: Ակտիվ եւ վերընթաց գծով են զարգանում երկու երկրների մշակութային հարաբերությունները: Մնցող տարի Բաալբեքի փառատոնում ելույթ ունեցավ Լորիս Ճգնավորյանի ֆիլհարմոնիկ նվագախումբը. Բիբլոսի փառատոնում, որը կազմակերպել էր Յունեսկոն, ելույթ ունեցավ ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը: Տարվա լավագույն մշակութային միջոցառումը համարվեց Օհան Դուրյանի համերգը: Բեյրութը 1999 թ. հայտարարված էր արաբական մշակույթի մայրաքաղաք, այդ շրջանակներում ելույթ ունեցան մեր տաղանդավոր երեխաները, կրկեսային խումբը հանդես եկավ, դեսպանության հովանավորությամբ բացվեցին նկարչական մի քանի ցուցահանդես (թվարկումը կարող է երկար տեւել): Ինչո՞ւ ենք կարեւորում մշակութային հարաբերությունները. այսօր չունենք տնտեսական այն մեծ ներուժը, որ կարողանանք մրցունակ լինել այլ երկրների հետ առեւտրի, տնտեսության զարգացման բնագավառներում: Ունենք մշակութային մեծ ներուժ, որն ակտիվորեն պիտի օգտագործվի մեր քաղաքական, միջազգային հարաբերություններում: Մշակութային միջոցառումների արդյունքը հաճախ ավելի մեծ է, քան քաղաքական քայլը: Այս առումով Լիբանանը բարենպաստ պայմաններ է ստեղծում մեզ համար, եւ նախագահի այցի ժամանակ նախատեսված մշակութային օրերը, կարծում եմ, շատ շահեկան արդյունք կտան:

Նույն գոհունակությամբ չեմ կարող խոսել տնտեսական հարաբերությունների մասին: Դրանք ետ են մնում: Անշուշտ պատճառներ կան: լիբանանյան կողմի առումով երկրի տնտեսական վիճակը. Հայաստանի որոշ օրենքների չկարգավորված լինելը, համագործակցության համար վստահություն ներշնչող բարենպաստ պայմանների բացակայությունը... Այս գործընթացին մեծ հարված հասցրին հոկտեմբերի 27-ի դեպքերը, եւ արդյունաբերողների այն խումբը, որն այցելել էր Երեւան, որոշ ափոթության մեջ հայտնվեց: Աստիճանաբար դժվարությունները հաղթահարվում են, դեպքերից հետո երկու խոշոր խմբեր եղան Հայաստանում՝ համատեղ ձեռնարկություններ բացելու մտադրությամբ, դեկտեմբերին այստեղ փաստաթուղթ ստորագրվեց՝ մեր Յունայթեդ բանկի մասնաճյուղը բացելու վերաբերյալ: Բացի այդ: հոկտեմբերին Հայաստանում երկրորդ բիզնես-ֆորումը եղավ, որը շատ հաջող անցավ: Ես հեռանկարներ տեսնում եմ, բայց մեծ աշխատանք կա անելու: Մեզ համար շատ կարեւոր է լիբանանցիների հետ մեր հարաբերությունների խորացումը. նրանց միջոցով կապեր հաստատել եւ զարգացնել արաբական մյուս երկրների հետ:



– Հայ համայնքից տեղեկացա, որ պաշտոնապես հայկական մի քանի ադրանքատեսակ է վաճառվում այստեղ՝ «Ջերմուկը», «Բջնին» եւ կոնյակը: Ասացին՝ հայկական հնաոճ գորգեր են վաճառվում...

– Պաշտոնապես այստեղ ոչինչ չի վաճառվում, եթե չհաշվենք «Ջերմուկը», որը հիմա, կարծեմ, փոխարինվել է «Բջնիով»: Կոնյակը բերվում է փոքրաքանակ, որովհետեւ այստեղ շուկա չունի: Ինչ վերաբերում է հնաոճ գորգերին, ըստ երեւույթին դրանք մասնաշենք ճանապարհով են բերվում: Սա պետական մակարդակով չի կատարվում: Մեզ համար շատ կարեւոր է կարգավորել առեւտրատնտեսական կապերը, դրա համար անհրաժեշտ է երկուստեք իրավական դաշտ ունենալ: Ստորագրել ենք մի փաստաթղթի ստորագրում, որը մեծ արդյունք կարող է հանգամանք է, որ Լիբանան-Հայաստան դիվանագիտական երկխոսությունն ավելի ջերմ լինի:

– Անշուշտ, ինքը մոր կողմից հայ է եւ լավ հայ: Երբեք սա չի թաքցնում, համենայն դեպս, մեր զրույցներում միշտ շեշտում է դա:

– Հայերեն գիտի՞:

– Վաս: Մենք միշտ օտար լեզվով ենք խոսում: Բացի այդ, կնոջ ծնողներն էլ հայ եւ ռուս են: Անշուշտ, որոշակի դեր խաղում է այդ հանգամանքը, բայց քաղաքականության մեջ այդ գործոնից ելնել, իմ կարծիքով, պարզապես մանկամիտ կամ վուլգարացված մոտեցում կլինի: Որեւէ քաղաքական գործիչ, առավել եւս նախագահ, երբեք նման գործոններն առաջնային չի կարող համարել: Նրա հայ ժողովրդի նկատմամբ լավ վերաբերմունքն առաջին հերթին անցյալից է գալիս, երկրորդ հերթին՝ իր երկրի քաղաքական շահերն են դա հուշում:

– Լիբանանում հայազգի տարբեր պաշտոնատար անձանց ներկայությունը Հայաստանի հետ Լիբանանի հարաբերություններում որոշակի դեր խաղո՞ւմ է:

– Սահմանադրական իշխանությունում հայերն այսօր 7 պատգամավոր ունեն եւ մեկ նախարար կառավարության մեջ՝ բնապահպանության եւ տուրիզմի նախարար Արթուր Նազարյանը: Նրանք, անշուշտ, հայրենասեր հայեր են, բայց չպիտի մոռանալ, որ նրանք առաջին հերթին ծառայում են այս երկրին: Եթե հարց է լինում դեսպանությանն օգնելու, մեծ մասամբ արձագանքում են: Բայց դեսպանության եւ պետական պաշտոնյայի միջեւ, անգամ եթե հայ է, կա մի սահմանագիծ, որ պահպանվում է:

– Պրն դեսպան, հոկտեմբերի 27-ի դեպքը, դրան հաջորդած Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի վայրկյան-վայրկյան փոխվող իրադրությունն ինչ-որ կերպ անդրադառնո՞ւմ են Ձեր եւ արաբ գործընկերների փոխհարաբերությունների վրա:

– Անշուշտ, երեւույթները ցավալի են, դիվանագիտությունը սերտորեն կապված է երկրի կյանքի եւ իրադարձությունների հետ, վերջին հաշվով արտաքին քաղաքականությունը ներքին շարունակությունն է: Հոկտեմբերի 27-ին մեզ մոտ հազարավոր մարդիկ եկան՝ հայեր, արաբներ, դիվանագետներ, նաեւ՝ օտարերկրացի հասարակ քաղաքացիներ, նաեւ անչափահաս երեխաներ: Սա ինձ հիշեցնում էր երկրաշարժի ժամանակ տեղի ունեցածը: Խոսքը տուրքերից ազատ առեւտրի առագայի մասին է, ինչպիսին, ասենք, Լիբանանն ունի Սիրիայի եւ Եգիպտոսի հետ: Հայրենիք-սփյուռք համաժողովում նախատեսվեց 5 երկրներում զարգացման գրասենյակներ բացել, դրանցից Բեյրութում բացվողը կնպաստի տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Լիբանանը մեզ համար պետք է լինի տարանցիկ երկիր, այս երկրի պայմանները, աշխարհագրությունը, պատմությունը, տնտեսությունը. Լիբանանի ամբողջ փորձը հուշում են սա: Չմոռանանք, որ Լիբանանը 17 միլիոնանոց սփյուռք ունի: Այնպես որ առջեւում անելիք շատ կա:

– Հայ համայնքում շատ է շահարկվում, թե նախագահ Էմիլ Լահուդի մայրը հայ է: Սա նպաստո՞ղ

աշխարհի կարեկցանքի ալիքը: Ասել, թե որեւէ բան է փոխվել, հատուկ վերաբերմունք է ստեղծվել, չեմ կարող, բայց չբացատրվող մի հետք այդուհանդերձ թողնում են այդպիսի երեւույթները: Հիմա ուշադիր հետեւում են իրավիճակին, միշտ հետաքրքրվում, այս բոլորի մեջ բարի կամեցողություն եմ նկատել:

– Թերթերն ինչպե՞ս լուսաբանեցին:

– Տարբեր մեկնաբանություններ եղան: Ուշադիր հետեւում էինք բոլոր հրապարակումներին: Միայն օրաթերթերից մեկում՝ «Սուսպարբալում», սկանդալային չարախինդ հոդված տպագրվեց՝ զարգացնելով այն միտքը, թե դա կազմակերպել էր ՀՅԴ նախագահն իր դաշնակից ՀՅԴ կուսակցության միջոցով: Ես պատասխան գրեցի՝ միակ հոդվածն էր, որին արձագանքեցի: Թերթն անմիջապես տպագրեց, ներողություն խնդրեց հետեւյալ ձեւով՝ հոդվածը չի արտահայտում խմբագրության կարծիքը: Խմբագրին ներքին կարգով դիտողություն արվեց նման մերկապարանոց հոդվածի համար:

– Աղբյուրը որտեղի՞ց էր:

– Ոչինչ գրված չէր: Իմիջիայլոց, հայկական օրաթերթն անմիջապես տպագրել էր իմ արձագանքը:

– Որքա՞ն հայ է ապրում Լիբանանում:

– Պաշտոնապես ասում են 120 հազար 300 հազարից, ցավոք, իջել է այս չափի, եւ արտագաղթը դեռ շարունակվում է: Երկրի տնտեսական վիճակը եւ այլ գործոններ են նպաստում դրան: Համայնքը քանակապես եւ որակապես փոքրացել է: Մերձավոր Արեւելքում մնում է ամենամեծ, ամենակազմակերպված եւ ամենաակտիվ համայնքը: Ըստ երեւույթին, ոչ միայն Մերձավոր Արեւելքում, ես բավական լավ գիտեմ սփյուռքը, չգիտեմ որեւէ տեղ մենք նման կառույցներ ունե՞նք: Երեք կուսակցությունների, երեք եկեղեցիների առկայությունն ինքնին պայմանավորում է այս հանգամանքը:

– Հայաստանից փախստականներն ի՞նչ թիվ են կազմում: Լիբանանի կառավարությունը նրանց նկատմամբ կո՞շտ դիրքորոշում ունի:

– Մեր տվյալներով մոտ 1000 հոգի: Առայժմ կոշտ դիրքորոշում չունի, բայց ժամանակի հետ կփոխվի: Մեծ մասամբ կարգավիճակ չունեն, գալիս են հայկական որեւէ կազմակերպությունում պայմանագրով աշխատելու, հետո մնում այստեղ կամ պարզապես մնալու հույսով գալիս են:

– Դեսպանության հետ հարաբերություններն ինչպե՞ս են:

– Նման մարդկանց հետ աշխատելու բավականաչափ փորձ ունենք: Բայց մեր աշխատանքը հաճախ միակողմ բնույթ է ունենում: Բացատրեմ՝ պետք է նախ հյուպատոսական հաշվառման կանգնեն՝ մուծելով չնչին մի գումար՝ 50 դոլար, ինչից խուսափում են: Նրանց՝ մշավորականների, երաժիշտների, խանդակագործների, նկարիչների հավաքեցի այստեղ, բացատրեցի, որ հաշվառումը հնարավորություն կստեղծի հյուպատոսական պաշտպանության տակ առնել իրենց: Բայց դրա կողքին օգնության հարց է լինում, վազում են դեսպանություն, գնում ենք: Շատերը շատ լավ հարաբերությունների մեջ են, բայց նուրբ հոգեբանական պահ կա. այնտեղից եկած մարդը մարգինալացված վիճակում է զգում, նույնիսկ ինչ-որ տեղ մեղքի զգացում էլ ունի, որ հայրենիքը թողել է, եւ դա պատնեշ է ստեղծում իր եւ դեսպանության միջեւ: Նրանք այնքան հաճույքով չեն մտնում դեսպանություն, ինչպես օրինակ, սփյուռքահայն է մտնում: Անձնագրերի հետ կապված բարդությունների առջեւ ենք կանգնել: Որոշ մասը գնում է Հայաստան, անձնագիր ստանում, վերադառնում, բայց շատերը կան խորհրդային նախկին անձնագրերով: Եթե դրանք ուժը կորցնեն, ինչպե՞ս պիտի ՀՀ մտնեն, մենք անձնագիր չենք տալիս, մեզ մոտ շրջանային դեսպանությունը հալեցվում է, այնտեղից են տալիս:

– Թեեւ առածն ասում է՝ «Մեռածների մասին կամ լավ, կամ ոչինչ», բայց նախորդ դեսպանի մասին այստեղ ասում են, թե հաշվածական մոտեցում ուներ: Ինքնադով սփյուռքից էր, բայց սփյուռքին միանշանակ վերաբերմունք չունեցավ: Ձեր մասին ասում են՝ բոլորի միջոցառումներին գնում եք: Ձեր եւ համայնքի կապն ինչպե՞ս կբնութագրեք:

– Նախ՝ հանգուցյալի վերաբերյալ: Դեսպանն իր երկրի քաղաքականությունն իրագործողն է: Ոչ մի քայլ աջ կամ ձախ անելու իրավունք չունի: Նա իր առջեւ դրված խնդիրը կատարել է, այստեղից էլ թե հաշվածական մոտեցումը, թե օտարացումը, թե խտրական մոտեցումն այս կամ այն հաշվածի նկատմամբ: Մեղադրել նրան դրանում չէի ցանկանա, ուրիշ հարց է, թե նա դա ինչպես է արել: Ինչ վերաբերում է իմ եւ համայնքի հարաբերություններին, անշուշտ, Լիբանանը բարդ համայնք ունի: Կատակով ասում են՝ ինձ ամեն օր պետք է կես լիտր կաթ տան առողջությունս պահելու համար: Համայնքը բազմազան է: Ես միշտ ասել եմ հետեւյալը՝ դեսպանությունն այստեղ բոլորի նկատմամբ հավասարահեռ կեցվածք ունի: Մենք ոչ մեկի ներքին գործերին չենք խառնվում, իրենք էլ դեսպանության գործերին չպիտի խառնվեն: Դեսպանությունն ակումբ չէ: Իսկ մենք բոլորի նկատմամբ նույն վերաբերմունքը, նույն մտերմությունը, նույն տարածությունն ունենք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Բեյրութ-Բոնն

(Հարցազրույցը կատարվել է ՀՀ նախագահի Լիբանան կատարած այցից առաջ)

ԱԶԳ

Միջազգային

«Բացակայողները միշտ սխալ են»

Հայաստանին բացատրեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ դեսպան Սերջիո Բալանշինոն

«Հայաստանն ընդգրկված է «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում: ՆԱՏՕ-ի հատուկ աշխատանքային խումբ է ստեղծվել՝ Կովկասի հարցերով զբաղվող: Մենք պատրաստ ենք Հայաստանում սեմինարներ, հանդիպումներ անցկացնել. Հայաստանը հնարավորություն ունի գործուն դեր կատարել, տեսակետներ փոխանակել: Լռությամբ մեկուսի կանգնածները դուրս կմնան: Մենք մի սկզբունք գիտենք՝ բացակայողները միշտ սխալ են», մարտի 6-ին հայաստանյան բարձրաստիճան պատվիրակությանը ողջույնի խոսքից հետո հավաստիացրեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, դեսպան Սերջիո Բալանշինոն:

Մարտի 6-8-ը ՆԱՏՕ այցելած ՀՀ պատվիրակությունն առաջինն էր իր ներկայացուցչական կազմով եւ լիազորություններով Հայաստան-Հյուսիսատլանտյան դաշինք հարաբերությունների ուղեծրում: Պատվիրակությունը բաղկացած էր 3 թեւից՝ արտգործնախարարություն, պաշտպանության նախարարություն եւ ԱԺ: Ցավոք, ըստ ամենայնի Հայաստանի ներքին իրադարձությունների ազդեցության ներքո, ԱԺ-ն խիստ անտարբեր գտնվեց եւ միայն օդանավակայանում պարզվեց, որ պատգամավոր Վահագն Գրիգորյանը չի մեկնելու Բրյուսել, եւ խորհրդարանը ներկայացնելու առաքելությունը միայնակ սանձնեց ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, երիտասարդ պատգամավոր Վազգեն Խաչիկյանը («Միասնություն»): ԱԺ ՆԳ, ԱԱ, պաշտպանության հանձնաժողովն անմասն մնաց, թեեւ այս կառույցն ամենաշատը պետք է շահագրգռված լինի Հայաստանի անվտանգության հավասարակշռված հայեցակարգի եւ ռազմական դոկտրինան փոխլրացման սկզբունքով ձեւավորելու գործում: Պատվիրակությունը գլխավորում էր փոխարտգործնախարար Ռուբեն Շուգարյանը, բանակցություններին մասնակցում էր ԱԳՆ սպառազինությունների վերահսկման եւ անվտանգության վարչության ղեկավար Վահրամ Գաբրիելյանը, պաշտպանության նախարարությունը եւս գործում էր՝ ի դեմս գլխավոր շտաբի պետի տեղակալ, հետախուզության պետ Բասենցի Ազրոյանի, արտաքին հարաբերությունների եւ ռազմական համագործակցության վարչության պետ Միշա Մելքոնյանի, որոնց օժանդակում էին եւ նախագահի, եւ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչներ, ԱԳՆ այլ աշխատակիցներ: Բանակցությունների նախապատրաստման եւ ողջ ընթացքի վրա զգալի էր Բելգիայում մեր դեսպան Վիգեն Չիթեչյանի ազդեցությունը, որին Սերջիո Բալանշինոն հատուկ շնորհակալություն հայտնեց: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերթսոնի հետ նախատես ծրագրած հանդիպումը չկայացավ, որովհետեւ նա մեր ժամանման օրը շատ պետք է մեկներ Թուրքիա՝ հատուկ այցով: Հայաստանյան պատվիրակության կազմը դարձել էր 13, բայց այս թիվը չխանգարեց ճշգրտելու անհրաժեշտ գործողությունների մարտավարությունը ՆԱՏՕ-ի հետ, հատկապես որ մարտի 6-ին ՆԱՏՕ-ի բոլոր հանդիպումներն ընթացան օրվա իրադարձության լույսի ներքո՝ ՌԴ նախագահի պաշտոնակատար Վլ. Պուտինը չի բացառել Ռուսաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, գուցե սա էր խթան, որ Արեւելյան Եվրոպայի եւ Ռուսաստանի հետ հարաբերությունների վարչության պատասխանատու Քրիս Շաթարդանովը Բասենցի Ազրոյանի հարցին, թե ի՞նչ այլընտրանք է տեսնում ՆԱՏՕ-ն մեր տարածաշրջանում Թուրքիայի համար, որը լինելով ՆԱՏՕ-ի անդամ՝ շարունակում է Անդրկովկասում Հայաստանից թշնամու կերպար ստեղծել եւ Ադրբեջանին մղել պատերազմի՝ անընդհատ հայտարարելով, թե Հայաստանի հետ իր դիվանագիտական եւ դրանից բխող բոլոր հարաբերությունները, նաեւ իրականացվող շրջափակումն առկախում է ղարաբաղյան հարցի փաստորեն ադրբեջանամետ հանգուցալուծմամբ, մեզ առաջարկեց՝ ՆԱՏՕ մտեք, համագործակցեք եւ ներսում ճշտեք ձեր դիրքորոշումները, ապա թե ոչ՝ ՆԱՏՕ-ն Կենտրոնական Ասիայում դրական է գնահատում Թուրքիայի դերը:

Մեր պատվիրակությունը մանրամասն ծանոթացավ ՆԱՏՕ-ի օրակարգին, Եվրատլանտյան գործընկերության խորհրդի նոպատակներին, «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» եւ «Ռազմական համագործակցություն» ծրագրերի ուղղություններին: ՆԱՏՕ-ի եւ Հայաստանի հարաբերություններում ամենավճռորոշ հանգուցակետերին՝ ՆԱՏՕ-ի դերը Բալկաններում իրենց պատկերացրած կայունությունը հաստատելու գործում՝ Բոսնիա, Կոսովո, ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերություններ, ՆԱՏՕ-ն Հարավային Կովկասում, ի մասնավորի Ադրբեջանի եւ Վրաստանի ՆԱՏՕ-ի անդամ դառնալու ցանկությունների հեռանկարը:

ՆԱՏՕ-ի ծգնաժամերի կառավարման բաժնի պատասխանատու Գորդոն Բրեսը զարգացրեց մեզ համար կարեւոր մի դրույթ՝ մեկնաբանելով Կոսովոյում իրենց գործունեությունը եւ սերբ-ալբանական հակամարտության կարգավորման իրենց պատկերացումները, փաստեց. «Տարածքների ամբողջականության հարցը հիմնարար չէ: Միտում կա, որ մարդու իրավունքների պաշտպանությունը կարող է գերակշռել ազգային ինքնիշխանությունը, տարածքների ամբողջականության սկզբունքը»: Ռուբեն Շուգարյանի պարզաբանիչ հարցին, թե ՆԱՏՕ-ն բացի Կոսովոյից այլ տեղում եւս կպատշաճի՞ մարդու իրավունքները եւ ոչ թե այդ իրավունքները ոտնահարող պետության սահմանները (ակնարկը թափանցիկ էր՝ Կոսովո-Ղարաբաղ, Սերբիա-Ադրբեջան-Ն. Դ.), Գորդոն Բրեսը զգույշ արձագանքեց. «Կոսովոյի խնդիրը պետք չէ դիտարկել նախադեպ, բայց միտում կա եւ ի վերջո մարդու իրավունքների պաշտպանությունը շատ ավելի կարեւոր է»:

ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հատուկ շեշտեցին, որ օրակարգում Եվրոպայի դերի բարձրացումն է: Կոսովոյի դեպքերն ապացուցեցին, որ ԱՄՆ-ը չափազանց հզոր է ռազմական առումով, իսկ Եվրոպան մնում է սվերում: Սերջիո Բալանշինոն պնդեց. «Եվրոպան պետք է պատասխանատվություն վերցնի: Եվրոպան տնտեսապես հզոր է, եւ այսօր ժամանակն է, որ նա իր միջուկային ուժին զուգահեռ ընդլայնի իր զինուժի հնարավորությունները: Եվրոպային նոր դեմք է պետք պաշտպանության մեջ»: Պատահական չէ, որ ՆԱՏՕ-ի նպխկին գլխավոր քարտուղար Խ. Սոլանան է այժմ Եվրամիությունում զբաղվում եվրոպական զինվորական կորպուսի ստեղծմամբ: Հայաստանը պատրաստվում է անդամակցել ԵԽ-ին, օրակարգում է Եվրամիության հետ գործակցությունը, ուստի մեր եւ ռազմական, եւ քաղաքական հարաբերությունները ՆԱՏՕ-ի բոլոր օղակների հետ՝ հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու համար, խիստ հրատապ են, հատկապես որ Ռուսաստանը ճկուն մարտավարություն է որդեգրում:

Ն. ՊԻԼԲԱՐՅԱՆ
Երեւան-Բրյուսել

Տարածաշրջանում, հետեւաբար Հայաստանում, ՆԱՏՕ-ի զինվորական պատասխանատուն Թուրքիան է

Սկիզբը էջ 1

Քաղաքական ձեւակերպումների ենթաբերտը բացահայտվեց բավական արագ. զինվորականներն ավելի անկեղծ էին եւ ուղղամիտ, քան ՆԱՏՕ-ի քաղաքագետները, կամ ինչպես ձեւակերպեց ՆԱՏՕ-ի գեներալներից մեկը «Զինվորականներն ավելի շուտ են միմյանց հասկանում, լեզու գտնում, քան քաղաքագետները»: Գեներալ Մորոն պնդեց. «Ներկա թշնամիներն իրենք պետք է լուծեն իրենց խնդիրները եւ ոչ թե ուրիշները: Ազգային շահերից պետք է ելնել դեպի վերազգային խնդիրներ»:

Թուրքիան շարունակում է մնալ ՆԱՏՕ-ի միջնաբերդը մեր տարածաշրջանում, ուստի Հայաստանի պատվիրակության հարցերի մեծ մասն ուներ ուղիղ հասցեատեր՝ Թուրքիան, որն արդեն նախադեպ ունի բռնազավթելու դաշնակից երկրի՝ ՆԱՏՕ-ի անդամ Հունաստանի պաշտպանյալ Կիպրոսի հյուսիսային տարածքը, ի զորու է կրկնելու իր քայլերը, հատկապես որ Թուրքիայի նախագահը հրապարակավ հայտարարում է, թե իրենք պատրաստ են ռմբահարել Հայաստանը, Վաֆա Գուլուզադեն պնդում է, որ Ադրբեջանում շուտով կտեղակայվի ՆԱՏՕ-ի ռազմակետ, ինչպիսի՞ն պետք է լինի այս ուժերի դասավորության թիրախում Հայաստանի հեռանկարը: Փոխադմիրալ Մոնտեֆորտեն իտալական կրքոտությամբ արձագանքեց. «ՆԱՏՕ-ն կոլեկտիվ ղեկավարության երկիր է, այստեղ մի պետության կամքով ոչինչ տեղի չի ունենում: Ես կարող եմ ձեզ վստահեցնել, որ ձեր մտավախությունները երբեւէ չեն դառնա իրականություն: Ես սուրճի մրուրով գուշակություն չեմ անում, բայց դա անհնար է, որովհետեւ ոչ ոք շահագրգռված չէ դրանում: Դա նույնն է, ինչ Ալպերում ձյան մի գունդ գցելը, որից ահռելի ձյունահյուսք կսկսվի: Հակառակ դեպքում իրադարձությունը կվերածի ներտարածքային շրջանակից եւ պատճառ կդառնա երրորդ համաշխարհային պատերազմի»:

«Թուրքիան կամուրջ է Եվրոպայի, Կովկասի եւ Ասիայի միջեւ»

ԱՆԿԱՐԱ, 8 ՄԱՐՏ, ՍՆԱՐՔ: Եվրամիությունն Թուրքիայի անդամակցության օգուտները կգերազանցեն դրա համար անհրաժեշտ հնարավոր ծախսերը, հայտարարել է Սուլեյման Դեմիրելը Financial Times-ի հետ հարցազրույցում: Թուրքիայի նախագահն ընդգծել է, որ երկիրը Եվրամիության համար կարող է կամուրջ դառնալ Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի միջեւ, որը մինչեւ Չինաստանի սահմանները ձգվող Եվրասիական տարածաշրջանի վրա ազդեցության հնարավորություններ կտա: Ս. Դեմիրելը նաեւ նշել է, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո երեւան է եկել նոր «քաղաքական աշխարհագրություն», եւ Եվրամիությանն անհրաժեշտ են նոր միջոցներ ծագող խնդիրների լուծման համար: Սրա հետ կապված Թուրքիայի նախագահը կոչ է արել Եվրամիությանն աջակցել իր կողմից առաջարկած Կովկասի կայունության պակտին, քանի որ անկայուն Կովկասը, նրա կարծիքով, ուղիղ ճանապարհ է դեպի ամբողջ Եվրասիական տարածաշրջանի անկայունություն: Ս. Դեմիրելը հաղորդել է, որ Կովկասյան հակամարտության կարգավորման շուրջ իր առաջարկություններով նամակներ է ուղարկել ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարներին:

Նոր վարչապետ Սիրիայում՝ Մուհամադ Միրոն

Մարտի 7-ին Սիրիայի վարչապետ Մահմուդ Զուբին հրաժարական է ներկայացրել նախագահ Հաֆեզ Ասադին, որն ընդունել է եւ հանձնարարել Հալեպի նահանգապետ Մուհամադ Մուսթաֆա Միրոյին կազմել նոր կառավարություն: Այս փոփոխությունը սպասելի էր 1999 թ. մարտից, երբ նախագահ Ասադը վերընտրվեց 5-րդ անգամ: Ի դեպ, նախկին վարչապետ Զուբին երկրի գործադիր մարմինը ղեկավարում էր 1987 թ. նոյեմբերից: Ենթադրվում են նախարարությունների կադրային եւ կառուցվածքային լայն փոփոխություններ: Նոր վարչապետ Միրոն ծնվել է 1941 թ.: Նա 1966 թ.-ից անդամ է իշխող «Բաաս» կուսակցության: 1980 թ.-ից կառավարել է սիրիական Դարա, Հասակե եւ Հալեպ նահանգները: Միրոն ստացել է դոկտորական աստիճան՝ արաբական գրականության բնագավառում:

Ա. Ա.

Սիրիա է այցելել Թուրքիայի փոխարտգործնախարարը

ՍՏԱՄԲՈՒԼ, 8 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Թուրքիայի փոխարտգործնախարար Ուղուր Զիյալի գլխավորած պատվիրակությունը այցելել է Սիրիա: Մարտի 7-ին նա հանդիպել է Սիրիայի փոխարտգործնախարար Սուլեյման Հադաթի հետ: Թուրք-սիրիական հարաբերությունները փակուղի էին մտել այն բանից հետո, երբ 1998 թվականին Անկարան պատերազմի բացահայտ սպառնալիքով հարկադրեց Դամասկոսին արտաքսել իր սահմաններից ՔԲԿ առաջնորդ Օջալանին: Թուրքիայի ԱԳ նախարարության փոխխոսնակ Սերմեթ Աթաջանլին հայտարարել է, որ թուրքական պատվիրակության այցի նպատակն է մշակել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման ընդհանուր մոտեցումները:

ԱՎՍՏՐԻԱ

Հայդերն իրականում չի հեռացել

Ավստրիայի ընտրություններում հաջողության հասած ծայրահեղ աջ ժողովրդական կուսակցության առաջնորդ Յորգ Հայդերի անսպասելի հրաժարականից հետո փաստորեն ոչինչ չի փոխվել: Երկրի նախկին արտգործնախարար եւ կանցլեր Վոլֆգանգ Շյուսելը, փորձելով մեղմել եվրամիությունում Ավստրիայի մեկուսացման հետ կապված լարվածությանը, մամուլին հայտարարեց, թե հրաժարականը «լիցքաթափման ազդանշան է ազգային եւ միջազգային մակարդակով»:

Իհարկե, նրա խոսքերը չհամոզեցին ոչ ավստրիացիներին, ոչ էլ եվրամիության անդամ մյուս 14 երկրներին, որոնք շարունակում են Ավստրիայի դեմ ուղղված պատժամիջոցների կիրառումը: Ավստրիացիները շատ լավ են ճանաչում Հայդերին եւ գիտեն, որ նա չի հրաժարվի իշխանությանը տիրելու մտադրությունից: Պահպանողական ուղղվածության «Դի Պրեսսե» օրաթերթը մասնավորապես գրեց. «Յորգ Հայդերը շարունակում է մուկն ու կատու խաղալ»:

Ուրեմն ինչի՞ համար էր այդ թվացյալ հրաժարականը: «Պուեն» հանդեսի մեկնաբանն այն կարծիքն է հայտնում, որ դա Հայդերի հերթական մարտավարական քայլն է: Քաշվելով իր հայրենի Կարինթիայի մարզը, Հայդերը ձեւացնում է, թե ինքը վեր է կանգնած այս վեճերից, ներկայանալով որպես անարդարացիորեն պատժվող ազգի շահերի պաշտպան: Բայց Ավստրիայում ոչ ոք չի հավատում, թե նա իրականում հրաժարվել է կանցլեր դառնալու հավակնությունից: Այն փաստը, որ Հայդերը իր կուսակցության ղեկը հանձնեց փոխկանցլեր Սուզաննա Ռիս-Պասերին, որը նրա մերձավորագույն համախոհներից է եւ «Արքայական կոբրա» մականունն է ստացել, վկայում է, որ Հայդերը մտադիր է ձեռքից բաց չթողնել կառավարման թելերը:

Բայց Հայդերի կառավարության որոշ նախարարներ արդեն իսկ հայտարել են վարկաբեկվել: Արդարադատության նախարար Միխայել Կրյուգերը, օրինակ, իր պաշտոնակալությունից ընդամենը երեք շաբաթ անց հրաժարական տվեց «գերբեռնվածության» պատրվակով: Իսկ Ֆինանսների երիտասարդ նախարար Կառլ Հայնց Գրասերը հրաժարվում է իր կուսակցությանը մուծում կատարել ամսական 10 հազար մարկը գերազանցող սեփական եկամուտներից:

Պ. Բ.

ԱԶԳ

Մշակույթ

«Փոքրիկ վիրտուոզներ» անսամբլը Լիբանանում եւ Սիրիայում

Երեւանի Արեւելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության հրավերով փետրվարի 18-28-ը Լիբանանում եւ Սիրիայում համերգներով հանդես եկավ Հայ ավետարանական ընկերակցության «Փոքրիկ վիրտուոզներ» (գեղարվեստական ղեկավար Սամվել Ավանեսյան) անսամբլը:

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն անսամբլի Բեյրութ ժամանելու միայն նախորդ օրն էր վերադարձել Հայաստան, եւ լիբանանյան մայրաքաղաքը դեռ զարդարված էր հայկական դրոշակներով՝ ի պատիվ ՀՀ նախագահի: Այս պարագան ոգեւորիչ էր նաեւ «Փոքրիկ վիրտուոզների» համար. Բեյրութը, կարծես, պատրաստ էր նաեւ պատանի հայ երաժիշտներին ընդունելու: Սփյուռքահայ մամուլը նախապես տեղեկացրել էր անսամբլի առաջիկա ելույթների, կազմի, ծրագրի, անցած ստեղծագործական ուղու եւ ձեռքբերումների մասին: 1998-ին Ֆրանսիայում եւ Անգլիայում ունեցած հյուրախաղերից հետո սա անսամբլի արտասահմանյան երկրորդ ուղեւորությունն էր:

Լիբանանում անսամբլը, որի ծրագրում ընդգրկված էին Ա. Խաչատրյանի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի, Սայաթ Նովայի, Ա. Վիվալդիի, Ն. Ռիմսկի-Կորսակովի եւ այլ նշանավոր հայ եւ եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ, ելույթ ունեցավ Բեյրութ, Այնջար, Սիրիայում՝ Դամասկոս, Քեսաբ եւ Հալեպ քաղաքներում:

Անսամբլը համերգներ տվեց Բուրջ Համուդի Տեր-Մելքոնյան դահլիճում, Բեյրութի Հայ ավետարանական առաջին եկեղեցում, Հայկազյան համալսարանում եւ տարբեր դպրոցներում: Համերգները, որոնք անցնում էին լեփ-լեցուն դահլիճներում, մեծ հետաքրքրություն էին առաջացնում թե երեխաների, թե մեծերի շրջանում: Համերգներից առաջ բացման խոսքով ելույթ էր ունենում «Փոքրիկ վիրտուոզներ» անսամբլի հիմնադիր եւ տնօրեն, ՀԱԸ-ի Հայաստանի ներկայացուցիչ Վեր. Ռընե Լեւոնյանը: Նա ներկայացնում էր «Փոքրիկ վիրտուոզների» ելույթների աշխարհագրականը, անդամներին, որոնք 9-14 տարեկան երեխաներ են եւ ուսանում են Երեւանի երաժշտական դպրոցներում, հիմնականում Չայկովսկու անվան դպրոցում: Այս շրջագայությանը մասնակցում էին անսամբլի ընդհանուր կազմի չորս անդամ՝ Սյուզան Վարդանյանը (ջութակ), Հրաչյա Ավանեսյանը (ջութակ), Սեւակ Ավանեսյանը (թավջութակ) եւ Լուսինե Աղաջանը (ջութակ): Բեյրութում անսամբլը ելույթ ունեցավ նաեւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Առամ Ա-ի, Ներսես Պետրոս ԺԹ-ի կաթողիկոս պատրիարք տանն Կիլիկիո Կաթողիկե հայոց նստավայրերում եւ Հայ ավետարանական եկեղեցիների միության կենտրոնում՝ Վեր. Մկրտիչ Կարագյոզյանի նախագահությամբ: Ելույթները, ինչպես միշտ, փայլուն էին եւ արժանացան հոգեւոր հայրերի բարձր գնահատականին: Համերգներից ազատ ժամանակ «Փոքրիկ վիրտուոզները» այցելեցին Բեյրութի Ջեյթա՝ շքախառն եւ պտխտարեր քարանձավը, վայելեցին Միջերկրականի ջրերը: Սիրիայում համերգներ տեղի ունեցան Դամասկոսում, որոնցից մեկը՝ Հայ Կաթողիկե եկեղեցուն կից սրահում, Քեսաբում՝ Հայ ավետարանական դպրոցում, Հալեպում՝ Հայ առաքելական եկեղեցու Ավետիս Ահարոնյան դահլիճում եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության դահլիճում՝ դպրոցականների համար: Սիրիայում կայացած համերգները պարզապես իրադարձություն էին տեղի գեղարվեստական կյանքում ու արվեստագետների կողմից բարձր գնահատվեցին: Անսամբլի անդամները Բեյրութում եւ Սիրիայում հյուրընկալվեցին երաժշտական դպրոցներում, հանդիպեցին երեխաների եւ ուսուցիչների հետ, միմյանց պատմեցին իրենց առօրյայի եւ ուսման մասին, ծանոթացան երաժշտական դպրոցների կյանքին:

Հայ ավետարանական ընկերակցության «Փոքրիկ վիրտուոզներ» անսամբլի համերգները միջոց են արտասահմանում ցուցադրելու հայ արվեստը, ներկայացնելու Հայաստանը որպես կենսունակ երկիր, ցույց տալու, որ ոչ մի դժվարություն չի կարող ընկճել հայ ոգին:

ՀԱԸ-Ի ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՅՇԱՀԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ

Աշխարհի վերջի լուսանկարը

20-րդ դարն արվեստի մեջ բարմացման, առանձին դեպքերում անգամ արմատական վերափոխումների շրջան եղավ: Ասպարեզ եկան բազմաթիվ ուղղություններ ու հոսանքներ: Արվեստի բարմացման այդ կենդանի ոգին ավելի շուտ ու շատ դրսեւորվեց գեղարվեստի մեջ: Անցնող դարը նորարար նկարիչների իսկական աստղաբույլ տվեց՝ արվեստի բոլորովին նոր ընդհանրացումներ պարունակող, ապագային ուղղված նոր հայացքներով: Ահա այս կետից էլ արվեստի վերափոխման վերջիններիս ստեղծագործական կողմնորոշումը դարի 9-րդ տասնամյակում շարունակելու եկավ Նորարար փորձառական արվեստի կենտրոնը: Իսկ այն հարցին, թե ո՞րն է արվեստում հեղաշրջման հենակետը, նորարար արվեստագետները պարզ ու հստակ պատասխան են տալիս՝ կյանքը, որը, կրկնված լինելով, անկրկնելի է յուրաքանչյուրի համար: Երեկվա մարդու ապրած հոգեվիճակներից տարբեր այսօրվա մարդու ներաշխարհն ու հույզերը. սա է շարժման տարածությունն ու հնարավորությունը, որն արվեստագետը դարձնում է հոգեպես բնակելի, գեղարվեստորեն յուրացված մի աշխարհ:

ՆՓԱԿ-ի 2000 թ. առաջին ցուցահանդեսը, որը կբացվի մարտի 14-ին, կլինի լուսանկարչական եւ կկրի «Աշխարհի վերջ» խորագիրը: Համադրող Ալբերտ Բարելյանի խոսքերով, «աշխարհի վերջ»-ի լուսանկարը ամսագրի տիպոսաբերթի, պլակատի, ֆիլմի ազդագրի եւ բատերական ներկայացման համար հնարավորություն կտա «աշխարհի վերջի» շուրջ լայնամասշտաբ բանավեճերի մեջ ներգրավել երիտասարդությանը: Ինչո՞ւ հատկապես «աշխարհի վերջ» հարցին, ցուցահանդեսի համադրողը պատասխանեց, որ 2000 թ. ամբողջ աշխարհն անհամբերությամբ էր սպասում, բայց միեւնույն ժամանակ նաեւ ներքին մտավախություն կար, որի հիմքում աշխարհի վերջի մասին չարագուշակ կանխատեսումներն էին: Բարեբախտաբար դրանք ինչ-որ մեկի երեւակայության ծնունդն էին: Իսկ կյանքը շարունակվում է: Ներդաշնակ զարգացման ձգտմանը զուգընթաց աճում են տեխնոգեն եւ այլ տիպի աղետները, մարդ էակի դաժանություններն էլ կարծես գագաթնակետին են հասել, մտահոգվում է արվեստագետը եւ ընդգծում, որ այդուհանդերձ ցուցահանդեսը հոռետեսական չպետք է համարվի: Այն կներկայացնի մեր իրականությունը, որքան էլ գորշ լինի եւ հերթական անգամ խորհելու տեղիք տա՝ արդյոք սա աշխարհի վե՞րջն է: Ցուցահանդեսը կոչված է պատասխանելու նաեւ այն հարցին, թե ի՞նչ է զգում այսօրվա երիտասարդությունը, ի՞նչ երազներ ու մտածումներ ունի:



Ինքը՝ ցուցահանդեսի համադրողը, լուսանկարը համարում է ինքնարտահայտման լավագույն միջոց: Ալբերտ Բարելյանն ավարտել է Չավեն Խաչիկյանի ֆոտոժուռնալիստիկայի դասընթացները եւ ներկայումս աշխատում է «Նորաբերթում»: Շատ է սիրում լուսանկարել արտակարգ իրավիճակներում: Նման պայմաններում աշխատելու շատ առիթներ է ունեցել: արտակարգ իրավիճակների սիրահարը զբաղվել է նաեւ ժայռամագլցմամբ, պարաշյուտային սպորտով: Ալբերտ Բարելյանը նպատակ ունի ստեղծել ֆոտոբրոշյուրներ: Դա, իհարկե, ապագայում, իսկ առայժմ պատրաստվում է մարտի 14-20-ը կայանալիք ցուցահանդեսին եւ ակնկալում երիտասարդության գործուն մասնակցությունը: Ցուցահանդեսին մասնակցել ցանկացողների լուսանկարներով ֆոնդը կհամալրվի մինչեւ մարտի 10-ը: Փաստաթուղթ են դրանք, թե արվեստի գործեր, կորոշեն կենտրոնի այցելուները: Կենտրոնի արվեստագետները լիահույս են, որ այս ցուցադրանյութը կհանգեցնի մի հոգեվիճակի, որն արդեն ոչ թե ցանկալի, այլ պարտադիր է հաղթահարելու համար անկման այս փուլերը, վեր կանգնելու աշխարհի վերջի գաղափարից եւ վերամիավորվելու զարգացման բնականոն եւ օրինաչափ ընթացքի շուրջ:

ԱՆՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆՈՐԻՑ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Աղջիկնե՛ր, գիրացեք, որ ամուսնանաք

Կանայք միշտ էլ փորձությունների են ենթարկվել: Եվ ոչ միայն Եվայի ու Լիլիթի ժամանակներում: Հատկապես դժվար է այն աղջիկների համար, ովքեր ցանկանում են ամուսնանալ:

Անգլիայում, միջին դարերում, կար այսպիսի մի սովորույթ. եկեղեցում դրվում էր մի մեծ արկղ, որի ծայր կափարիչը հարսնացուն պետք է կարողանար բարձրացնել մի ձեռքով: Եթե դա նրան չէր հաջողվում, համարվում էր, որ հարսնացուն ֆիզիկապես թույլ է տնտեսություն վարելու համար, եւ փեսացուն կարող էր հրաժարվել ամուսնությունից:

Մակեդոնիայի Գալիչնիկ շրջանում երիտասարդ ամուսինների համար կա այսպիսի մի սովորույթ. հարսանիքից հետո ընկերները երիտասարդ զույգին ուղեկցում են նկուղ, որի հատակը ծածկված է փշատերեւներով: Նրանց թիկունքում զնգում է փականը, եւ նրանք անմիջապես

նետվում են դեպի նկուղի անկյունը, որտեղ դրված են ճշավոր կոճիկներ եւ մի գլխարկ: Ինչ վերաբերում է գլխարկին, այստեղ գործը հետաքրքիր է: Ամանդույթ կա, որ եթե կինը հասցնի վերցնել գլխարկը, ամուսնությունը հաջող կլինի: Ամուսինը, ցույց տալով, որ իբր դիմադրում է, կնոջն է հանձնում գլխարկը: Իսկ կոճիկների հարցը բարդ է, որովհետեւ նա, ով կգիջի կոճիկները, ամբողջ կյանքում պետք է ադրի մյուսի կրունկի տակ:

Հարավկենտրոնական Նիգերիայում աղջիկներին, որոնք պատրաստվում են ամուսնանալ, երկար ժամանակով (ամիսներ, գուցե նաեւ տարի ըստ արդյունքի) փակում են առանձին խրճիթներում, որտեղ ելումուտ են անում միայն նրանց մայրերը: Նրանք հանձն են առնում բավականին «ծանր» պարտավորություն. անշարժ մնալ, ոչինչ չանել, միայն... ուտել, ուտել համեղ, սննդարար այն բոլոր ուտելիքները, որոնք պատրաստում են մայրերը: Որքան ավելի գեր է հարսնացուն, այնքան ավելի մեծ է հաջող ամուսնության հավանականությունը:

Աստղերը ոչ միայն շքեղ են, այլեւ՝ խելացի

ՄԵՐԻԼ ՍՏՐԻՊ- Եղի հանպատարաքի դրամայի դերասի մագիստրոս: «Մեդիսոնի կոմսության կամուրջները» ֆիլմի համար ստացավ 5 մլն դոլար, իսկ «Վայրի գետը» ֆիլմում նկարահանվելիս նրա աշխատավարձն էլ ավելի բարձրացավ:

ՋՈԴԻ ՖՈՍԹԵՐ- Եղի հանպատարաքի գրականագիտական ֆակուլտետի շրջանավարտ՝ արվեստների բակալավրի աստիճանով: 6 մլն վարձակեց «Նելի» համար:

ԳԼԵՆ ԳԼՈՍ- Թատերական եւ հեռտրական ֆակուլտետի արվեստների բակալավր: Նկարահանվել է «Թուղթը» ֆիլմում եւ ստացել 2 մլն դոլար հոնորար:

Իսկ ահա Շերոն Սթոունը դուրս է մնացել Փենսիլվանիայի էդինբորո համալսարանից: Ցուլյա Ռոբերթսը ոչ մի բարձրագույն կրթություն չունի եւ առանձնահատուկ ցանկություն էլ չունի սովորելու: Դեմի Մուրը, որը «Սթրիփթիզ» ֆիլմում նկարահանվելու համար ստացել է 12,5 մլն դոլար գումար, անգամ միջնակարգ կրթություն չունի: «Երբեմ չեմ նեղվում, որ միջնակարգն էլ չեմ ավարտել, բայց երբեմն մտավոր պակաս եմ զգում», ասում է Դեմին:

Պատրաստեց Մ. ԹԱՂԱԼԵՅՈՒԼԸ

ՕՐՎԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մարտի 9

- 1749 թ. ծնվել է Օնորե Միրաբոն՝ 1789-ի Ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչ:
- 1906 թ. ծնվել է ռուս խորհրդային կինոռեժիսոր Ալեքսանդր Ռոուն:
- 1910 թ. ծնվել է ամերիկացի կոմպոզիտոր Սեմյուել Բարբերը, որի ստեղծագործության մեջ ներդաշնակորեն զարգանում են նեոկլասիցիզմի, ինչպես նաեւ ջազի ռոմանտիկ ավանդները:
- 1934 թ. ծնվել է ԽՍՀՄ տիեզերագնաց-օդաչու Յուրի Գագարինը: 1961 թ. ապրիլի 12-ին Գագարինն աշխարհում առաջինը տիեզերք թռավ «Վոստոկ» տիեզերանավով, երկրագնդի շուրջ 1 պտույտ կատարեց 1 ժամ 48 րոպեում եւ վերադարձավ երկիր:
- 1974 թ. մահացել է հայ գրող Խաչիկ Դաշտենցը: Դաշտենցն ավարտել է Երեւանի պետհամալսարանի եւ Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտը: 30-ական թվականներին իրար հետեւից լույս տեսան երիտասարդ բանաստեղծի ժողովածուները: Սակայն Դաշտենցին փառք բերին «Խողեղան» եւ հատկապես «Ռանչպարների կանչը» վեպերը, որոնք նվիրված են դարասկզբին հայ ժողովրդի ողբերգությանը, ֆիդայիների ազգային-ազատագրական պայքարին:
- Այս օրը հին հայկական տոմարով Արեգ ամսվա Չորեքթի օրն է:

ՆԱՒԲԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Բարսելոնը»՝ հաջորդ փուլի մասնակից

Չեմպիոնների լիգայի երկրորդ խմբային փուլում չորրորդ տուրի հանդիպումներն անցկացրեցին «A» եւ «B» խմբերի թիմերը:

«Բարսելոնի» ֆուտբոլիստները հայտարարում են, որ մրցաշրջանում իրենց գլխավոր նպատակը Չեմպիոնների լիգայում հաղթելն է: Եվ, իրոք, իսպանական թիմը վստահ քայլերով առաջ է շարժվում: «Բարսելոնը» հերթական հաջողությանը հասավ՝ հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթելով «Պորտոյին»: Հաշիվը բացվեց 37-րդ րոպեին, երբ անկյունային խաղարկումից հետո իսպանացիների պաշտպան Աբելարդոն գրավեց դաշտի տերերի դարպասը: Երկրորդ խաղակեսը նույնպես ընթացավ «Բարսելոնի» առավելությամբ, եւ 59-րդ րոպեին բրազիլացի Ռիվալդոն տուգանայինից կատարած շեշտակի հարվածով կրկնապատկեց հաշիվը: Սրանով նա Չեմպիոնների լիգայի այս խաղարկությունում իր խփած գնդակների թիվը հասցրեց 8-ի (նույնքան գոլ է իր հաշվին գրանցել նաեւ «Պորտոյի» խաղացող Մարիո Ժարդելը): Այս հաղթանակի շնորհիվ «Բարսելոնը» հաջորդ փուլին մասնակցելու իրավունք ապահովեց: **«A» խմբի** մյուս երկու թիմերը՝ «Սպարտան» ու «Հերտան», իրենց հարաբերությունները պարզեցին Պրահայում անցկացված հանդիպման ժամանակ: Խմբի վերջապահների խաղի մակարդակն այնքան էլ բարձր չէր. թերեւս, երկու թիմերի ֆուտբոլիստներն ավելի շատ այլի ընկան կոշտ խաղով, ինչի համար պատժվեցին դեղին քարտերով: Ամբողջ խաղի ընթացքում դաշտի տերերը առավելություն ունեին, բայց միայն վերջին րոպեին կարողացան գոլ խփել: Դրանից հետո փոխարինման մտած Զդենեկ Սվոբոդան շեշտակի հարվածով գնդակն ուղարկեց հյուրերի դարպասը. այն դիպավ դարպասածողին եւ հայտնվեց ցանցում:

Անորոշ իրավիճակ է **«B» խմբի** մրցաշարում: Այստեղ «Բորդոն» զրկվել է հաջորդ փուլ մտնելու հույսից, եւ երկու տեղի համար երեք թիմեր են պայքար մղում: Իհարկե, ավելի լավ հնարավորություններ պահպանում է «Մանչեսթր յունայթեդը»: Հյուրընկալվելիս անգլիական թիմը կարողացավ նվազագույն առավելությամբ հաղթել «Բորդոյին»: Խաղասկիզբը ոչ մի լավ բան չէր խոստանում հյուրերին: 9-րդ րոպեին ֆրանսիացիների խաղացող Միշել Պավոնը գոլ խփեց: Այդ դրվագում շատ անվստահ գործեց «Մանչեսթրի» դարպասապահ Վան դեր Գոուվը: Դժվար է ասել, թե ինչ ավարտ կունենար այս հանդիպումը, եթե 33-րդ րոպեին հոլանդացի մրցավարը խաղադաշտից չհեռացներ ֆրանսիացի Լիլիան Լասլանդին: Գնդակի համար պայքարում նա եւ «Մանչեսթրի» կիսապաշտպան Դեյվիդ Բեքհեմը ընդհարվեցին, որից հետո մրցավարը դեղին, ապա եւ կարմիր քարտ ցույց տվեց «Բորդոյի» խաղացողին: Անմիջապես էլ անգլիացիները հավասարեցրին հաշիվը. պատասխան գոլը խփեց Ոյ Քինը: Երկրորդ խաղակեսն ընթանում էր հավասար պայքարում, բայց խաղավերջում ֆրանսիացիները զիջեցին: Նորվեգացի Օլե Գունար Սոլսքերը 86-րդ րոպեին հաջողություն բերեց «Մանչեսթրին»: Մրցակցի երկու պաշտպանների հետ պայքարում նա վարպետորեն առաջ անցավ եւ խփեց 2-րդ գոլը:

Իր գործերը որոշակիորեն շտկեց «Վալենսիան», որն ընդունել էր «Ֆիորենտինային»: Երկու թիմերն էլ հանդիպման սկզբում ակտիվ խաղ ցուցադրեցին, սուր պահեր ստեղծեցին մեկմեկու դարպասի մոտ, բայց հաշիվը բացվեց միայն 35-րդ րոպեին: «Վալենսիայի» ռումինացի հարձակվող Ադրիան Իլիեն հիանալի հարվածով գրավեց հյուրերի դարպասը: «Ֆիորենտինայի» խաղացողներն ասիճանաբար տեղի տվեցին. զգացվում էր, որ նրանք ֆիզիկապես զիջում են մրցակիցներին: Երկրորդ խաղակեսի ընթացքում «Վալենսիայի» առավելությունն ակնհայտ էր, եւ սուր պահեր հաճախակի էին առաջանում իտալացիների դարպասին: Շատ ակտիվ էր Կլաուդիո Լոպեսը: Նրա հարվածներից հետո գնդակը երկու անգամ դիպավ հյուրերի դարպասի հորիզոնական ծողափայտին: Ի վերջո, նրա ջանքերը արդյունք տվեցին: Հանդիպման վերջին րոպեին «Ֆիորենտինայի» խաղացողներն իրենց տուգանային հրապարակում վայր գցեցին Լոպեսին, եւ դաշտի տերերի ավագ Գաիսկա Մենդիետան 11 մ հարվածով խփեց երկրորդ գնդակը:

«A» խումբ

«Պորտո» (Պորտուգալիա)-
«Բարսելոն» (Իսպանիա)՝ 0–2
«Սպարտա» (Չեխիա)-
«Հերտա» (Գերմանիա)՝ 1–0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բարսելոն	4	3	1	0	12–3	10
2. Պորտո	4	2	0	2	5–6	6
3. Սպարտա	4	1	1	2	2–8	4
4. Հերտա	4	0	2	2	2–4	2

«B» խումբ

«Բորդո» (Ֆրանսիա)-
«Մանչեսթր յունայթեդ» (Անգլիա)՝ 1–2
«Վալենսիա» (Իսպանիա)-
«Ֆիորենտինա» (Իտալիա)՝ 2–0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մանչեսթր	4	3	0	1	7–3	9
2. Ֆիորենտինա	4	2	1	1	3–2	7
3. Վալենսիա	4	2	0	2	5–4	6
4. Բորդո	4	0	1	3	1–7	1

«C» եւ «D» խմբերի թիմերը մրցաշարեզ մտան երեկ երեկոյան:

Գողերը ներողություն խնդրեցին սխալի համար

Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոն հստակորեն սահմանազատված է երկու ճամբարի, որոնք ընդգրկում են քաղաքի ֆուտբոլային երկու ուժեղագույն ակումբների՝ «Պենյարոլի» եւ «Նասիոնալի» երկրպագուներին: Այնտեղ ընդունված է ամբողջ կյանքում հավատարիմ մնալ միեւնույն թիմին:

Լատինամերիկացի գրող էդուարդո Գալեանոն իր «Ֆուտբոլ. սվեր եւ լույս» գրքում նույնիսկ մի զավեշտական դեպք է պատմում: «Պենյարոլի» մոլի ջատագով ընտանիքներից մեկի ծեր ու մահամերձ հիվանդ հայրը խոստովանում է, որ ինքը խոստովանահորից խնդրել է իրեն բերել «Նասիոնալի» երկրպագուների ակումբի անդամի քարտ, որպեսզի իր մահից հետո «տրիբունաներից «Նասիոնալին» ծափահարողների թիվը մեկով պակաս լինի»:

Մոնտեվիդեոյում երկու ճամբարի են բաժանված ոչ միայն ատխարհականները, այլեւ կրոնավորները: Լատինամերիկացիներից շատերի նման, ուրուգվայցիները սիրում են կտրուկ եզրահանգումներ կատարել: Օրինակ, եթե ինչ-որ մեկը «Պենյարոլի» կողմնակիցը չէ, ուրեմն հակառակորդն է: Երկու ճամբարների ներկայացուցիչներն ուղղակի ատում են իրար, բայց յուրայինների հանդեպ գրեթե միշտ առկա են հարգանք եւ նվիրվածություն:

Այս առումով հատկանշական է օրերս Ուրուգվայում տեղի ունեցած եւ երկրի լրատվամիջոցներում լուսաբանված միջադեպը: Խոսքը «Պենյարոլ» ակումբի նախագահ Խոսե Պեդրո Դամիանիի մասին է, որը շքեղ առանձնատուն ունի երկրի արեւելքում՝ Պունտա դել Էստե բնակավայրում: Երբ Դամիանին մի քանի օր առաջ հերթական անգամ մեկնեց Պունտա դել Էստե, նա ցավով նկատեց, որ իր առանձնատան դուռը կոտրված է: Ակումբի նախագահն անմիջապես անհանգստացավ տանը եղած թանկարժեք նկարների, խճանկարների, արծաթեղենի, ինչպես նաեւ «Պենյարոլի» նվաճած եւ իր առանձնատանը ցուցադրվող մրցանակների համար: Բայց նա անչափ զարմացավ, տեսնելով, որ տանը ոչինչ չի պակասել:

Դրա բացատրությունը կարելի էր գտնել հատակորեն սեղանին ամրացված թղթի կտորի վրա: Այնտեղ գրված էր. «Ներողություն, նախագահ: Չեզանից չենք գողանա»: Ստորագրությունից պարզվում էր, որ գողերը «Պենյարոլ» ակումբի երկրպագուներ են: Տան պատերի վրա թիմի լուսանկարները եւ ցուցադրված մրցանակները տեսնելով՝ նրանք հասկացել էին, որ իրենք սխալ հասցեով են գնացել: Ուստի անմիջապես փակել էին դուռը եւ հեռացել: Խոսե Պեդրո Դամիանիին մնում էր միայն փոխել դռան կոտրված փականը:

Պ. Ք.

ՇԱԽՄԱՏ

Առջեւում են Կասպարովը եւ Կրամնիկը

Իսպանիայի Լինարես քաղաքում շարունակվում է աշխարհի վեց ուժեղագույն գրոսմայստերների մասնակցությամբ մրցաշարը: 21-րդ կարգի մրցաշարի 7-րդ տուրի բոլոր հանդիպումներն ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով: Միավոր կիսեցին Գարրի Կասպարով (Ռուսաստան)-Ալեխանդր Խալիֆման (Ռուսաստան), Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)-Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան), Պետեր Լեկո (Հունգարիա)-Ալեխեյ Շիրով (Իսպանիա) զույգերը:

Յոթ տուրից հետո մրցաշարը շարունակում են գլխավորել Կասպարովը եւ Կրամնիկը, որոնք 4,5-ական միավոր են վաստակել: Մյուս մասնակիցների արդյունքներն այսպիսին են. Լեկո՝ 3,5, Խալիֆման եւ Շիրով՝ 3-ական, Անանդ՝ 2,5 միավոր:

Երկու շրջանով անցկացվող մրցաշարի ավարտին մնացել է երեք տուր:

ԹԵՆԻՍ

Չեմպիոնուհին չորոշվեց... անձրեւի պատճառով

ԱՄՆ-ի Սիրբդեյլ քաղաքում անցկացված մրցաշարի եզրափակիչ էին մտել աշխարհի առաջին եւ երկրորդ թենիսիստուհիներ Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա) եւ Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ): Շատերն էին սպասում այս մենամարտին. բոլորին հետաքրքրում էր, թե Հինգիսը վերջապես կկարողանա՞ հաջող խաղալ իր հիմնական մրցակցուհու հետ (բանն այն է, որ այս թենիսիստուհիների վերջին հանդիպումներում հաղթում է Դեւենպորտը): Սակայն այս անգամ վճռական մենամարտը չկայացավ վատ եղանակի պատճառով. երկու օր անընդմեջ անձրեւը հնարավորություն չտվեց անցկացնել եզրափակիչը: Մրցաշարի կազմակերպիչները սողոմոնյան վճիռ կայացրեցին. Հինգիսին եւ Դեւենպորտին հանձնվեց 43,5-ական հազար դոլար պարգեւավճար, նրանք նաեւ հավասար վարկանիշային միավորներ ստացան:

Ի դեպ, անձրեւի պատճառով հետաձգվեց նաեւ Ֆլորիդայում սկսվելիք տղամարդկանց մրցաշարը: Մասնակիցների թվում են ամերիկացի հանրահայտ թենիսիստներ Փիթ Սամփրասը եւ Անդրե Ագասին: Վերջինս հնարավորություն ունի համաշխարհային դասակարգման ցուցակում կրկին դառնալ առաջինը՝ շրջանցելով Եվգենի Կաֆելնիկովին (Ռուսաստան):

Ամերիկյան մեկ այլ քաղաքում՝ Դելրեյ Բիչում ավարտված մրցաշարի հաղթող դարձավ Ստեֆան Կուբեկը (Ավստրիա): Եզրափակիչում նա 6–1, 4–6, 6–4 հաշվով պարտության մատնեց Ալեխ Կալատրավային (Իսպանիա):

Անհաջողություններ երկար շրջան կարողացավ ընդհատել Գուստավո Կուերտենը (Բրազիլիա): Չիլիի մայրաքաղաք Սանտյագոյում կայացած մրցաշարի վճռական խաղում նա 7–6, 6–3 հաշվով առավելության հասավ Մարիանո Պուերտայի (Արգենտինա) նկատմամբ եւ նվաճեց գլխավոր մրցանակը: Սա այս տարվա ընթացքում Կուերտենի առաջին հաղթանակն է:

Սանտյագոյի մրցաշարին մասնակցեց նաեւ մեր Սարգիս Սարգսյանը: Սակայն նա առաջին իսկ խաղում 4–6, 4–6 հաշվով պարտություն կրեց արգենտինացի Ագոստին Կալերիից եւ դուրս մնաց հետագա պայքարից:

Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում անցկացված մրցաշարի եզրափակիչը զվեդական էր: Գլխավոր մրցանակը վիճարկեցին այդ երկրի ներկայացուցիչներ Անդրեաս Վինսիգուերան եւ Մագնուս Նորմանը: 6–3, 7–6 հաշվով հաղթեց Վինսիգուերան, ինչը շատերի համար անակնկալ էր:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

Խաչբառ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Լուսոն: 2. Հորան: 3. Շիլդս: 4. Վկա: 5. Կնդրուկ: 6. Տրեխ: 8. Սինա: 10. Առաս: 12. Ալի: 14. Յար: 16. Վառում: 19. Կեսանմ: 23. Դա: 26. Ոիցա: 29. Որակ: 31. Լիգա: 33. Թուր: 35. Ամառ: 36. Ալիս: 38. Անտիկ: 40. Նա: 42. Ալո: 43. Օր: 45. Ուր: 50. Լեղա: 51. «Նորա»: 53. Գոգ: 54. Եվա: 55. Ակն: 56. Սեղ:

Հորիզոնական

7. Տյուսո: 9. Կանս: 11. Սիրիա: 13. Լյարդ: 15. Վերոնա: 17. «Լաղա»: 18. Արկ: 20. Բախ: 21. Նանսի: 22. Առաուս: 24. Ակտ: 25. Ռոա: 27. Սի: 28. Ցո: 30. Ցոլ: 32. Աքար: 34. Գազա: 37. Երակ: 39. Մալ: 41. ՆԱՏՕ: 44. «Առա»: 46. Լիր: 47. «ԱՐ»: 48. Թոկ: 49. Հերա: 52. Գեա: 57. Վովկ: 58. Գան: 59. Պամելա:



Խաչբառ

Ուղղահայաց

1. Թռչուններ, մկներ որսալու թակարդ: 2. Բեռնակիր կենդանի: 3. Կաթոլիկ հոգեւորականներին շնորհվող կոչում: 4. Քաղաք-նավահանգիստ Պորտուգալիայում: 5. _ Սիեղ: 6. Չեչնիայի մայրաքաղաքը: 7. Ազոտաթթվի աղ: 10. Հյուսիսամերիկյան հնդկացիական ցեղի ներկայացուցիչ: 11. Հայոց գրերի ստեղծողը: 14. Մեծ Հայքի 4-րդ նահանգը: 15. Դրամատար: 17. Ըստ բուդդայական կրոնի հաճելի, երանելի վիճակ: 18. Գիշատիչ կաթնասուն: 19. Նահանգ ԱՄՆ-ում: 20. Մոնղոլական բանակի զինվոր: 24. Արու հավ: 25. Քաղաք Ենիսեյի ափին: 26. Հայոց հին տոմարի 9-րդ ամիսը: 27. Մեծ Հայքի 9-րդ նահանգը: 29. Բոնցքամարտի տերմին: 30. Դիվանագետ, հյուպատոս: 32. Գյուղ ՀՀ Լոռվա մարզում: 34. Պետության խորհրդանիշ: 35. Թատերական ներկայացման գործողություն:

Հորիզոնական

8. Հնագույն քաղաք Փոքր Ասիայում: 9. Ամուսնացած կին: 11. Անհետացած կաթնասուն կենդանի: 12. Հույն թատերգակ, ատտիկյան կատակերգության հիմնադիրը: 13. Ազնվականական կալվածք: 15. Ամազոնի ջրերում ապրող դելֆին: 16. Խորհրդային հոկեյիստ, օլիմպիական կրկնակի չեմպիոն: 18. Չեռի զարդ: 21. Զինվորների բնակության տեղը: 22. Ընբամարտի տարատեսակ: 23. Ասիայի հնագույն ժողովուրդների ներկայացուցիչ: 24. Հայ նախարարական հնագույն տոհմ: 27. Շար ոգի, նեռ: 28. Արեւի աստվածը եգիպտական դիցարանում: 31. Եվրոպայում ապրող ժողովուրդ: 33. Ժամանակի միավոր: 34. Աստղային համակարգություն: 36. Սոմերով ջահ: 37. Քիմիական միացություն: 38. Եվրոպական պետության մայրաքաղաք:

Կազմեց Ս. ՎԱՆՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների երկու հանրապետական թեկնածուները՝ նահանգապետ Ջորջ Բուշն ու սենատոր Ջոն Մակ Քեյնն անցյալ շաբաթ հայտարարություններ հրապարակեցին Հայկական ցեղասպանության վերաբերյալ: Ավելի վաղ նույն ընտրությունների ժողովրդավարական կուսակցության երկու հավակնորդները՝ փոխնախագահ Ալ Գորն ու նախկին սենատոր Բիլ Բրեդլին նույնպես հանդես էին եկել միևնույն թեմայի վերաբերյալ հայտարարություններով:

Ամերիկայի Հայոց ազգային կոմիտեն ուղղած իր նամակում սենատոր Մակ Քեյնը «1915-23 թթ. սարսափելի իրադարձությունները» որակել է «մինչև մեկուկես միլիոն հայերի սիստեմատիկ սպանություն»: Չնայած նա բացահայտորեն չի օգտագործել ցեղասպանություն բառը, սակայն նրա նշած «սիստեմատիկ սպանությունը» համազոր է ցեղասպանության փաստի ընդունմանը: Բառերի ընտրության հարցում չեմ վիճի նրա հետ եւ ընդհանրապես զգնում եմ, որ հայկական համայնքում նրա նկատմամբ ստեղծված կասկածները անտեղի են: Մենք ողջունում ենք սենատորի հայտարարությունը եւ գովասանքի խոսքեր հղում բոլոր նրանց, ովքեր օգնեցին նրա ստեղծմանը: Այնուամենայնիվ, մենք դեռեւս մտահոգված ենք 1990 թվին Հայկական ցեղասպանությունը հիշատակելու Բոբ Դոուլի Սենատ ներկայացրած բանաձեւի դեմ նրա քվեարկության առնչությամբ: Ճիշտ է, ուրախ ենք, որ նա վերանայել է իր դիրքորոշումը, բայց նախնական ընտրությունների շեմին կատարած նրա հայտարարությունն առավել արժեւորելու համար կարիք ունենք ավելի հիմնավոր աղացույցների՝ նրա պարտավորվածության եւ նվիրվածության: Թեկնածուի անցյալում կատարած քվեարկությունն ավելի շոշափելի ցուցանիշ է իր դիրքորոշման, քան նրա խոսքերը ընտրությունների շեմին:

Չմոռանանք նաեւ, որ սենատոր Մակ Քեյնը անցյալ հունիսին դեռ քվեարկել էր հօգուտ 907 հոդվածի վերացման: Այնպես որ, չորս նախագահական թեկնածուների իմ անձնական դասակարգումը ըստ Հայկական ցեղասպանության հանդեպ նրանց ունեցած դիրքորոշման, հետեւյալն է. սենատոր Բիլ Բրեդլի, նահանգապետ Ջորջ Բուշ կրտսեր, սենատոր Մակ Քեյն եւ փոխնախագահ Ալ Գոր:

ՀԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»

ԱՄՆ

Նախագահական թեկնածուները եւ Հայոց ցեղասպանությունը

Այժմ, երբ երկու կուսակցությունների չորս թեկնածուները հրապարակավ արտահայտել են իրենց դիրքորոշումը այս խիստ նուրբ հարցի շուրջ, ամերիկահայ համայնքը կարող է առավել տեղեկացված մասնակցել առաջիկայում սպասվող նախնական ընտրություններին:

Նախքան յուրաքանչյուրի անհատական մոտեցումը քննելը, պետք է իմ գոհունակությունն արտահայտեմ այն առնչությամբ, որ մենք կարողացանք ի վերջո գրավել ուշադրությունը բոլոր չորս թեկնածուների, որոնցից մեկը նոյեմբերին կընտրվի Միացյալ Նահանգների նախագահ:

Սովորաբար թեկնածուները համապատասխան դիրքորոշում ընդունում են ազգային կամ միջազգային հնչեղության միայն մի քանի հարցերի շուրջ: Եթե մեզ հաջողվել է հայկական մի հարցի շուրջ բոլոր չորս թեկնածուների գրավոր դիրքորոշումը ձեռք բերել, պարզապես նշանակալի երեւույթ է, որը վկայում է, որ ամերիկահայ համայնքը ակտիվորեն ներգրավված է երկրի քաղաքական կյանքում եւ բավականաչափ արդյունավետ կարողանում է ազդել դրա վրա: Բոլորիս համար պարզ է, որ այդ հայտարարությունները օդից չիջան: Դրանք արդյունք են բազմաթիվ անհատների հետեւողական ջանքերի: Նրանցից ոմանք մեծ ներդրում ունեն այդ գործում: Ուրիշներ ընդգրկված են որեւէ առանձին թեկնածուի աշխատակազմում: Երրորդները պարզապես նրանցից մեկի մտերիմներն են կամ էլ քաղաքական վաղեմի դասընկերները: Հայկական քաղաքական կազմակերպությունները նույնպես կարեւոր դեր խաղացին այդ թեկնածուների հետ կապի մեջ մտնելով եւ նրանց ներկայացնելով մեր ազգային հարցերը:

Եթե նրանք ուշադրություն են դարձնում մեր հարցերին, նշանակում է, որ մենք կարեւոր ենք նրանց համար: Նրանք հասկանում են, որ բացի իրենց ընտրաբավին օժանդակելուց, հայերը կարող են նաեւ որոշիչ դեր խաղալ հատկապես այն նահանգներում, որտեղ մեծ թիվ են կազմում: Բոլորովին էլ պատահական չէր, որ Բուշ կրտսերն ու Մակ Քեյնը ցեղասպանության վերաբերյալ իրենց հայտարարությունները հրապարակեցին մի քանի օրվա տարբերությամբ, Կալիֆոռնիայում, Նյու Յորքում եւ Մասաչուսետսում հատարակության հետ սպասվող իրենց նախնական հանդիպումներից ուղիղ մեկ շաբաթ առաջ: Ահա իմ գնահատականը նրանցից յուրաքանչյուրի դիրքորոշմանը:

Սենատոր Բրեդլին քանիցս խիստ վճռականորեն է արտահայտվել Հայկական ցեղասպանության վերաբերյալ, նրա խոսքերը կասկած չեն թողնում, որ անկեղծ է եւ նվիրված: Նահանգապետ Բուշ կրտսերն իր առաջին հայտարարությունն այս առնչությամբ կատարեց հայ համակիրներից երկուսին՝ Էդգար Հակոբյանին եւ Վազգեն Սեդրակյանին ուղղված իր փետրվարի 19 թվակիր նամակով, որտեղ կոտորածները որակել էր «ցեղասպանական արշավ»: Ավելին, նա խոստացել է նախագահ ընտրվելու դեպքում՝ «որպես ազգ պատշաճորեն կճանաչենք հայ ժողովրդի ողբերգական տառապանքը»: Մենք գոհ ենք այս հայտարարությունից: Բայց հուսով ենք մոտ ապագայում այլ առիթներ կունենանք ստուգելու այդ հարցում նրա պարտավորվածության եւ նվիրվածության աստիճանը:

Փոխնախագահ Ալ Գորը մի քանի հայտարարություններով հանդես է եկել վերջին ամիսներին: Նրանցից ոչ մեկում չեն հիշատակվում «Հայկական ցեղասպանություն» բառերը: Իր վերջին հունվարի 21-ի հայտարարության մեջ նա կտրականապես անհարիր եւ անընդունելի էվֆեմիզմներ է օգտագործել, օրինակ՝ «ողբերգություն» եւ «դառը ժառանգություն»: Նրա հայտարարությունները շատ հեռու են անթերկնից լինելուց: Փետրվարի 22-ին Ամերիկայի Հայ դատի ազգային կոմիտեին ուղղած իր նամակում սենատոր Մակ Քեյնը «1915-23 թթ. սարսափելի իրադարձությունները» որակել է «մինչեւ մեկուկես միլիոն հայերի սիստեմատիկ սպանություն»: Չնայած նա բացահայտորեն չի օգտագործել ցեղասպանություն բառը, սակայն նրա նշած «սիստեմատիկ սպանությունը» համազոր է ցեղասպանության փաստի ընդունմանը: Բառերի ընտրության հարցում չեմ վիճի նրա հետ եւ ընդհանրապես զգնում եմ, որ հայկական համայնքում նրա նկատմամբ ստեղծված կասկածները անտեղի են: Մենք ողջունում ենք սենատորի հայտարարությունը եւ գովասանքի խոսքեր հղում բոլոր նրանց, ովքեր օգնեցին նրա ստեղծմանը: Այնուամենայնիվ, մենք դեռեւս մտահոգված ենք 1990 թվին Հայկական ցեղասպանությունը հիշատակելու Բոբ Դոուլի Սենատ ներկայացրած բանաձեւի դեմ նրա քվեարկության առնչությամբ: Ճիշտ է, ուրախ ենք, որ նա վերանայել է իր դիրքորոշումը, բայց նախնական ընտրությունների շեմին կատարած նրա հայտարարությունն առավել արժեւորելու համար կարիք ունենք ավելի հիմնավոր աղացույցների՝ նրա պարտավորվածության եւ նվիրվածության: Թեկնածուի անցյալում կատարած քվեարկությունն ավելի շոշափելի ցուցանիշ է իր դիրքորոշման, քան նրա խոսքերը ընտրությունների շեմին:

Չմոռանանք նաեւ, որ սենատոր Մակ Քեյնը անցյալ հունիսին դեռ քվեարկել էր հօգուտ 907 հոդվածի վերացման: Այնպես որ, չորս նախագահական թեկնածուների իմ անձնական դասակարգումը ըստ Հայկական ցեղասպանության հանդեպ նրանց ունեցած դիրքորոշման, հետեւյալն է. սենատոր Բիլ Բրեդլի, նահանգապետ Ջորջ Բուշ կրտսեր, սենատոր Մակ Քեյն եւ փոխնախագահ Ալ Գոր:

ՀԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»

Վացլավ Հավելի ամերիկյան «զարմուհին»

Երբ Չեխիայի նախագահ Վացլավ Հավելը ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթին առաջարկեց իրեն փոխարինել Չեխիայի նախագահի պաշտոնում, թե՛ Ամերիկայում եւ թե՛ Չեխիայում մտքում կարծեցին, թե դա քաջարի շինվոր Շվեյկի երկրին վայել մի կատակ է: Սակայն, ինչպես նշում է ազդեցիկ «Թայմ» շաբաթաթերթը, առաջարկությունն այսօր պետք է լրջությամբ ընկալվի: Հայտնի է, որ Չեխիայի նախագահը վաստակոր է եւ համաքաղաքացիներին կոչ է անում որպես իր իրավահաջորդի ընդունել Չեխիայի մի քաղաքացուհու՝ թեկնածությունը, որի ընտանիքը ԱՄՆ-ում աղաստան գտավ 1948 թ. կոմունիստական հեղաշրջումից հետո: Խոսքը Մադլենկա Կորբելովայի մասին է, որն աշխարհին ավելի շատ հայտնի է իր ամերիկյան՝ Մադլեն Օլբրայթ անուն-ազգանունով:

Մեկուկես տարի առաջ Վացլավ Հավելը ԱՄՆ պետքարտուղար Օլբրայթին արդեն առաջարկել էր դառնալ Չեխիայի Հանրապետության նախագահ: Այն ժամանակ տկն Օլբրայթն այդ միտքը զվարճալի էր համարել, բայց չափազանց զբաղված էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությամբ, ուստի անուշադրության էր մատնել առաջարկը: Բայց այժմ Բիլ Քլինթոնի նախագահության ժամկետը մոտենում է ավարտին: Եթե ներկայիս փոխնախագահ Ալբերտ Գորը Քլինթոնին հաջորդի էլ, նա հազիվ թե պետքարտուղարի պաշտոնը կրկին վստահի Մադլեն Օլբրայթին, քանի որ Կոնգրեսի նկատմամբ վերջինիս բռնած կոշտ դիրքորոշումը հաճախ հակասել է Սպիտակ տան շահերին: Իսկ Մադլեն Օլբրայթի նման կոփված ունեցող գործիչը դժվար թե բավարարվի Ջորջթաունի համալսարանի դասախոսի պաշտոնով, որը նա զբաղեցնում էր նախքան ՄԱԿում ԱՄՆ-ի դեսպան դառնալը: «Պուեն» հանդեսը գրում է, որ տեսականորեն ոչինչ չի խանգարում Չեխիայում Մադլեն Օլբրայթի պաշտոնավարությանը: Նրա հայրը՝ Յոզեֆ Կորբելը ժամանակին Չեխիայում գնահատված դիվանագետ էր եւ երկրորդ աշխարհամարտից հետո նշանակվել էր Չեխիայի արտգործնախարար: Բայց 1948 թ. կոմունիստական հեղաշրջումից հետո ստիպված եղավ ընտանյոք տեղափոխվել Միացյալ Նահանգներ: Նա զավակներին դաստիարակեց հայրենասիրական ոգով: Մադլեն Օլբրայթը վարժ խոսում է չեխերեն: ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում նա միշտ հանդես է եկել ՆԱՏՕ-ին Չեխիայի անդամակցության օգտին:

Բայց Չեխիայի նախագահի պաշտոնի համար նրա թեկնածության մասին առաջին անգամ բարձրաձայն խոսվեց օրերս Օլբրայթի Պրահա կատարած այցի ժամանակ միայն: Այցի առիթը անկախ Չեխոսլովակիայի հիմնադիր Թոմաս Մազարիկի հիշատակի հարգման արարողությունն էր:

Պ. Ք.

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժին

Դասախոսությունների շարք ծրագիր

ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ

Գագիկ Եգանյանը

ներկայացնում է

«Միգրացիոն գործընթացները Հայաստանում եւ դրանց պետական կառավարման անհրաժեշտությունը»

Հինգշաբթի, մարտի 9-ին, ժամը 18:00-ին
Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում
Դասախոսությունը կընթանա հայերենով, անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության *«Զվարթնոց» միջազգային օդանավակայան պետական փակ բաժնետիրական ընկերություն*

հայտարարվում է մրցույթ՝

ավիավառելիքի մատակարարի ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել մատակարար կազմակերպություններն ու ձեռնարկությունները:

- **Պատվիրատու** – *ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ՔԱԳՎ «Զվարթնոց» միջազգային օդանավակայան պետական փակ բաժնետիրական ընկերություն:*
- **Ավիավառելիքի տեսակը** – *տուրբոռեակտիվ շարժիչներով օդանավերի լիցքավորման ավիավառելիք:*
- **Պահանջարկը** – *9-10 հազար տոննա:*
- **Ավիավառելիքը պատվիրատուին հանձնման կետը** – *երկաթուղային տրանսպորտով փոխադրման դեպքում՝ ՀՀ երկաթուղու «Այրում» կայարան, օդային եւ ավտոմոբիլային տրանսպորտով տեղափոխման դեպքում՝ Երեւանի «Զվարթնոց» օդանավակայան:*

Մրցութային առաջարկությունները ընդունվում են մինչեւ 03.04.2000 թ., ժամը 17:00:

Մրցութային առաջարկությունների գնահատումը՝ 05.04.2000 թ., ժամը 16:00: Մրցույթի պայմանների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ «Զվարթնոց» ՍՕ ՊՓԲ ընկերությունում ամեն օր, ժամը 9:00-16:00 (բացի կիրակի օրերից), հետեւյալ հասցեով՝ 375042, Երեւան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, հեռ.՝ 283863, 226777, 282641, ներքին հեռախոս՝ 30-79:

ՀԵՌՈՒՏԱՑՐԱԳՐԵՐ

9 Մարտ

ԱՐՄԵՆԻԱ

11.00, 21.00 Շաբաթվա օրը
11.40, 21.40 Օրվա մամուլ
12.00, 12.45, 13.30 Օրվա մամուլ
11.10, 15.10 Սուլտիկ շոու
12.55, 19.55 Ավտոտրաքի Մարտրես-2000
13.00, 20.30 Բլից
13.35 Գ/Ֆ «Գլադիատորը»
16.15 Գ/Ֆ «Եղնիկներ որսացողը»
19.30, 22.00 Ժամը
20.00 Հայրենիքի սիրուհի
22.30 Գ/Ֆ «Քաղաքի լեգեոնները»

1

7.00 Բարի առավոտ
9.20 Ընտրություններ-2000
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.40 Վիկտորինա երեխաների համար
17.00 «100 տոկոս» ծրագիրը
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Ընտրություններ-2000
19.30 Կալանքում
20.05 Գործընթաց
20.50 Է. Ռաբինովիչ «Սերոն կամ Նեռի ժամանակը» հեղինակային ծրագիրը (1-ին մաս)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Քնած առյուծը» (դերերում Կ. Սորոկին, Ս. Մարտինսոն, Ս. Պուգովկին 1965 թ.)
00.30 Ֆուտբոլ. ՈՒԵՖԱ-ի 1/8 գավաթ. «Սելտա» (Իսպանիա)-«Յուվենտուս» (Իտալիա)
(01.25 Նորություններ)

ՌՏՊ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.20 Բարի լույս, Ռուսաստան
9.25 Հեռուստաբեմային ՀՄՄ. հերթական բաժանում
9.40 Ընտանեկան նորություններ
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-տորս»
11.00 Քվանտային բժշկագիտություն
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստաբեմային ՀՄՄ
13.30 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց խաղամ»
15.00 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.40 Նոր «Ինչ բնակարան»
17.30 Խանութ բազմոցի վրա
17.45 Բժշկական լուրեր
18.20 Աշխարհ
19.00 «Ռուսիա» կինոթատրոն. Վերա Գլագոլեւան եւ Ալեքսանդր Ֆիլիպենկոն «Ես ինքս» ֆիլմում
20.25 «Կլոր սեղան»
21.45 Վալենտին Յուդաշկին. տոնական շոու
00.05 «Կ-2-ը ներկայացնում է
01.20 Վերջին սեանս. Մայք Քեյնը եւ Շոն Յանգը «Երկնագույն սառույց» դետեկտիվում (ԱՄՆ)
03.05 Հեռուստաբեմային ՀՄՄ. հերթական բաժանում
03.20 Խանութ բազմոցի վրա

ՀՌԹՎ

7.00, 7.30, 7.45, 8.00, 8.30, 8.45, 9.00, 9.30 Այսօր առավոտյան
7.15, 9.10 Սպորտ
7.20, 8.15, 19.40 Քրեական
7.35, 8.50 Մեծ փողեր
7.50, 9.15, 18.25 Պաշար
8.20 «Կարդանային լիսեռ»
8.35 Մուլտֆիլմ
9.45 Հեռաերիտ կինո
9.55, 11.25 «Շինինա» Լեոնիդ Պարֆյոնովի ֆիլմը
11.00, 13.00, 15.00, 17.00, 20.00, 23.00 Այսօր
12.20 Մեծ ծնողներ
13.30 Հին հեռուստացույցը հիշում է «Պահապանել կանանց»
15.25 Գ/Ֆ «Բերթ Ռիգբի, դու հիմար ես»
17.35 Սերիալ «Լոյիսը եւ Քլարքը. Գերմարդու նոր արկածները»
18.25 Հեռաերիտ կինո
18.50 Սերիալ «Մանանեխ Բիլի սերն ու գաղտնիքները»
20.35 Օրվա հերոսը
20.55 Գ/Ֆ «Իմ բանկային մարդ» (դերերում Ի. Սախարովա, Ա. Բասպրով, Պ. Կոնստանտինով, Լ. Բիկով, 1958 թ.)
23.45 «Կնոջ հայացք»
00.20 Այսօրվա
01.10 Այսօր կեսգիշերին
01.35 Գ/Ֆ «Սնաս բարով, արա» (դերերում Ժ. Ռեդգրեյվ, Ս. Մասորյանի, Իտալիա-Ֆրանսիա, 1977 թ.)

ՍՊՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Հեռ. 590000 - http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1217 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 8. 03. 2000 Գինը՝ 100 դրամ